

5132

9(47.925)

U-25

3/23
0-25


Հիշեցի ձեր նշանը

Տ. Բաբյան

ՀԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑ

Հ Ի Ն Ց Ա Ի

(ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍԱԿԱՆ ԽՈՀԵՐ)



Մ Ո Ս Կ Ո Ւ Ս.
ՏՊԱՐԱՆ ՎԱՐՎԱՌԷ ԳԱՏՏՈՒԿ.
1900.



Дозволено цензурою. С.-Петербургъ, 22 марта, 1900 года.

Ա Ձ Դ

Այս գրքոյկի մէջ հաւաքուած են զանազան ժամանակ
„Մշակում“ լոյս տեսած մեր յօդուածներից մի քանիսը,
որոնք նուիրուած են մեր կեանքի այն խնդրին, որին կա-
րելի է „Հին ցաւ“ անունը տալ...

Լ. Ս.

2 001

8 Ա Ն Կ

	Էրե-
I. Ալտրուիզմ և հոգեորականներ	1
II. Մօտիկ անցեալից	7
III. Ինչե՞ համար են	17
IV. Վեղարաւորը մեր կեանքում	20
V. Կղերի դերը	26
VI. Կեանքի քննադատութիւնը	43

I.

ԱԼՏՐՈՒԻԶՄ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

Զոհել անձնական բարեկեցութիւնը, իր «ես»ը, ուրիշի բարօրութեան համար, մոռանալ իրան «ոչ-ես»-ի համար՝ դա այն բարձր բարոյական զգացմունքն է, որ բարոյել է և Քրիստոս: Այժմեան փիլիսոփայութիւնը այդ դաղափարը կոչում է ալտրուիզմ և նրան ընդունում է իբրեւ հիմնաքար հասարակական առաջադիմութեան:

Ուրեմն, մաքուր քրիստոնէութիւնը ալտրուիստական դաւանանք է և հոգեորական դասակարգ կաստային նախապաշարմունքներով ու շահերով չէ կարող հարազատ լինել աւետարանի ոգուն:

Աւետարանի բարոյիչ պէտք է թողնի ամեն մի իշխանասիրական ու բռնակալական ձգտում և դառնայ ժողովրդի սպասաւոր, նա իր անձը պէտք է դնի «եղբարք» բարօրութեան համար: Այլապէս քրիստոնէայ հոգեորականը կռապաշտական հոգեորականութեան հետեող է դառնում և չէ տարբերվում նրանից: Ալտրուիստը ոչ միայն չէ կարող դէմ լինել այն բոլորին, ինչ որ ընդհանրութեան համար բարիք է, այլ մինչեւ անգամ, իր եսական շահը մի կողմ դնելով, պէտք է ձգնի ձեռք բերելու այն, ինչ որ ուրիշների բարօրութեան տեսակէտից անհրաժեշտ է:

Սյուպէս ահա սիստեմի բերված ճշմարտութիւնները, այսինքն գիտութիւնը, որ մարդուն միջոց է տալիս օգտվել թէ իր և թէ բնութեան ոյժերով աւելի դիւրին կերպով բարօրութեան հասնելու համար, ինչպէս և արդարապատութիւնը, որ բոլոր մահկանացուների համար հաւասար օրէնքներ սահմանելով և իւրաքանչիւրին հաւասար դիւրութիւն տալով երեւան հանել չարադործութիւնը՝ ապահովում է մարդու տարրական իրաւունքը՝ անձի, ստացուածքի և պատուի անբռնաբարութիւնը ուժեղների կամայականութիւններից՝ ահա այդ երկուսն էլ ընդհանրութեան բարօրութեան համար անհրաժեշտ դործօններ են։ Ուստի աշտրուխտը, ուրեմն և աւետարանի ոգուն հաւատարիմ իւրաքանչիւր անձ, չը պէտք է դէմ լինի այդ դործօնների։ Սյնտեղ, ուր գիտութիւն և արդարադատութիւն չը կայ, պէտք է տիրէ խաւարն և անիրաւութիւնը, որ ձեռնտու կարող են լինել միմիայն մի.քանիսին և ոչ ընդհանրին։

Որտեղ ընդհանրութիւնը, ժողովուրդը, կամ նրա ընտրածները չեն քննում օրէնքները, այլ մէկի կամ մի քանիսի քմահաճութիւնը օրէնք է յայտարարվում և կամքը՝ անսխալական, այնտեղ կամայական ըեժիմ է տիրապետում, որը ձեռնտու է միայն այն անձանց, որոնց ձեռքում է իշխանութեան ղեկը կամ որոնք իշխանաւորի մերձաւորներն են։

Աշտրուխտ կամ լաւագոյն հոգեւորականութիւնը պէտք է մերժի կամայականութեան հետ դաշնակցութիւնը և հաւատարիմ քնայ ժողովուրդին, որից և որի համար նա ընտրվում է։ Ժողովուրդի հաւաքական արտայայտութեան — եկեղեցու սպասաւոր դառնալով, արժանաւոր հոգեւորականը պէտք է աշխատի ժողովուրդի բարօրութեան համար, որը գիտութեան և արդարադատութեան հետ է կապված. նա ժողովուրդի հաւատարիմ սպասաւորը պէտք է լինի և ոչ նրա վրա իշխողը կամ տէրը. նրա իրաւունքները պաշտպանողը

պէտք է լինի և ոչ նրա իրաւունքներ ռոնակոխ անողը։ Դասակարգային կղերական շահեր նա չը պէտք է ընդունի, այլ միայն ժողովուրդական բարօրութիւն, եթէ չէ ուղղում նմանել եղութիւններին։

Յայտնի է, որ քրիստոնէական եկեղեցու անունից չարադործութիւններ անող եղութիւնները հալածվեցին գիտութեան և ժողովուրդի համար դործողներից, իբրեւ քնասակար հակաքրիստոնէական տարր։ Եւ արդարեւ, նրանք, որոնք տանջում, այրում, մեռցնում էին անմեղ մարդկանց, ստեր ու կեղծիքներ տարածում, բռնութեան օժանդակիչներ հանդիսանում, յեղաշրջում իրենց դարշելի նպատակների համար աւետարանը, կղերի գերիշխանութիւնը դօրացնում, կղերի անսխալականութիւնը յայտարարում, ժողովուրդի համար բռնութեան շղթաներ կռւում՝ նրանք ճշմարտութեան թշնամիներ էին և իրաւունք չունէին իրանց հետեւող համարել մարդկանց համար հալածված, տանջված և խաչված Քրիստոսին...

Հեղութեան, սիրոյ, անձնուրացութեան փոխարէն այդ հոգեւորականութիւնը ընկել էր դոգմութեան, եսամոլութեան, մամոնայի և աշխարհային վայելչութիւնների երկրպագութեան ետեւից։ Իրենց անձը հօտի կամ ժողովուրդի համար գնելու փոխարէն՝ նրանք յափշտակում, իւրացնում էին ժողովուրդի սեփականութիւնը՝ համարելով այդ բոլորը իրենց «փարաջի գինը»։ Եկեղեցին ջոկում էին ժողովուրդից և ոչ միայն հղօրների առաջ չէին պաշտպանում թոյլերին, այլ իրանք էին խլում ժողովուրդի իրաւունքները և աջակցում, շողքօրթում բռնակալներին։ Ժողովուրդի լուսաւորութիւնը իրենց ձեռքը ղցելով կեղծում էին գիտութիւնը, այլանդակում էին մատաղ սերնդի միտքը և հօգին՝ աղատ, աշտրուխտական և ժողովուրդասէր քրիստոնէական եկեղեցու համար պատրաստելով նեղ, կղերական, անհամբերող և եսական ոգով սնված սոսկալի հրէշներ, որոնք իրենց չարադործութիւններով միայն զայրոյթ և զզուանք առաջացրին ժողովուրդի մէջ։

Եւ այդ տեսակ հոգեորականութիւնը ըստ արժանոյն գնահատուեց. նրա հեղինակութիւնը ընկաւ, որովհետեւ ամեն մի բեթիմ, որը փոքրամասնութեան շահերին է ծառայում և արդարութեան ու զիտութեան փոխարէն կամայականութեան ու նախապաշարմունքի վրա է հիմնված՝ արդէն ինքն իր մէջ կրում է քայքայման ու մահվան կնիքը: Քանի որ նա վնաս է հասցնում մեծամասնութեան՝ ժողովրդի բարօրութեան, նա պէտք է ոչնչանայ, ինչպէս միջնադարեան անձնիշխան, անսխալական պապականութիւնը, որ շնորհիւ իր կղերի բարոյական այլանդակութեան, անթիւ խարդախութիւններին և ճնշող ինկվիզիցիայի՝ միայն արագացրեց իր անկումը և առաջացրեց բէֆօրմացիան:

Հին-հայաստանում էլ աբեղաների մեծ մասը քրիստոնէական ոգուն բոլորովին հակառակ ընթացք էր բռնել և քաղդէէհէհէական ու կռապաշտական ծէսերի և նախապաշարմունքների մէջ էր փնտռում կրօնը: Վանքերից, ուր ազիտութիւնը և արծաթսիրութիւնը առաքինութիւն էր ճանաչված, հալածվելով հալածվելին Խորենացիներն ու Փարպեցիները: Ժողովրդի լուսաւորութեան և բարեգործութեան համար շինված վանքերը, իրենց ընդարձակ կալուածներով, աբեղաների անձնական սեփականութիւն էին դարձել: Նրանք յափշտակում էին աղբի սեփականութիւնը՝ դանձ զիջելու և աշխարհական ազգականներին հարստացնելու նպատակով: Հոգեւորական աստիճանը սակարկութեամբ վաճառվում էր դրամով. ժողովրդի ընտրութիւնը խախտված էր: Շրջիկ աբեղաների «նուիրակութիւններով» կեղեքվում էր ժողովուրդը յօգուտ պորտաբոյծ, ծոյլ և աղէտ միաբանների: Հոգեւորականութիւնը ժողովրդի ազիտութիւնը և միամտութիւնը դարձրել էր հարստահարութեան անսպառ աղբիւր. դժոխքի արհաւիրքներով ու սատանաներով վախեցնում էին նախապաշարված ժողովրդին, իրենց զրպանների համար նուէրներ կորզելու նպատակով: Աւետարանի լայն, աւարու խստական ոգին քարոզելու փոխարէն

նրանք զրգռում էին կատաղի Փանատիկոսութիւն և թշնամութիւն դէպի այն մարդիկ, որոնք այնպէս չէին հասկանում բարոյականութիւնը, ինչպէս հաճելի էր տղէտ աբեղաներին: Հարստահարված, ճնշված ժողովրդին մարդկային իրաւունք բարոյելու փոխարէն՝ հոգեւորականները ստրկահոգութեան և բռնութեան խնկարկողներ էին և անիրաւութիւնների սրբագործողներ: Համարեա նոյնը տեւում է մինչև մեր օրերը:

Եւ ժողովուրդը միշտ տեսնելով աղէտ, մոլեռանդ, շահաւէր և ստոր մարդիկ հոգեւորական պաշտօնի մէջ՝ կամաց-կամաց սովորեց նրանց վնասակար համարել և առաժնորում արհամարհել ու ծաղրել: Չը նայելով դրան, երբ երևան էր դպիս մի ազնիւ, լուսաւոր և գործով ժողովրդասէր հոգեւորական՝ ժողովուրդը, չը լսելով կղերի մեծամասնութեան չարախօսութիւններին, յարգում, պաշտում էր այդպիսի անձին: Ժողովուրդն իր առողջ դատողութեամբ միշտ լաւն և արդարը վաղ թէ ուշ հասկանում է: Այդպէս, Կարբեցու բոլոր ստոր ու կեղտոտ միջոցներն անգոր էին վայր գցելու Աշաարակեցու ժողովրդականութիւնը ոչ միայն հասարակութեան լուսաւոր և առաջադէմ մասի աչքում, այլ և ժողովուրդի, որը գործերով է գնահատում իր անունից խօսողներին:

Ժողովուրդն իր օգուտը լաւ է հասկանում: Նրան կարելի է սուտ ու խաբուսիկ բաներով մոլորեցնել միայն կարճ ժամանակով, նրա ուշադրութիւնը հեռացնել իր վերքերից կարելի է միայն վայրկենաբար, բայց նա վերջ ի վերջոյ ըմբռնում է ճշմարտութիւնը և կրկին վերադառնում իր վերքերին և այնուհետեւ ոչ մի շանտաժային կամ փարիսեցիական աչքակապութիւն չի օգնի, և այնուհետեւ կղերը կաս պէտք է դոհացում տայ ժողովրդի դրած պահանջներին և բարեփոխվելով դառնայ ժողովրդի վերածնութեան գործօններից մէկը, կամ... արհամարհվելով մոռացվի ժողովրդից և պապական կղերի վեճակին հասնի:

Մեր դարում անձնիշխան կամայականութիւնը և մեծամիտ տղիտութիւնը անպատիժ չեն անցնում, ինչպէս և չեն անցել երբէք: Այժմեան հասարակական կարգերի իդէալը le peuple souverain-ն*) է, և առաջադիմութեան յաղթական ընթացքում փշրվում, ոչնչանում է այն ամենը, ինչ որ անհամապատասխան է արդարադատութեան և դիտութեան պահանջներին:

1895 թ., Ապրիլ:

*) Ժողովուրդը՝ իշխող:

II.

Մ Օ Տ Ի Կ Ա Ն Ց Ե Ա Լ Ի Ց

«Ո՛հ հովիւք, որք զանձինս արածէք և ոչ զխաշինս»:

Ներկան լուսաբանվում է անցեալով, ինչպէս երեւոյթները՝ պատճառներով: Մեր այսօրվայ օրը մի կղզիացած կամ անցեալից բոլորովին խզված մօմենտ չէ, այլ շարունակութիւն, հետեանք նախընթաց եղելութիւնների և կատարված դործերի:

Ուստի մեր հնազէտ-պատմադրող Ա. Երիցեանի «Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում» վերնագրով աշխատութիւնը, վերաբերվելով մեր ամենամօտ անցեալին և հիմնված լինելով մեծ մասամբ պաշտօնական գրութիւնների և ականատեսների նկարագրութիւնների վրա, ունի ներկայիս համար էլ շատ ուսանելի յատկութիւններ: Շատ անգամ կիրքը մեզ թոյլ չէ տալիս ներկայի համանման երեւոյթների վրա սառն և արդար քննադատութեամբ խօսել, իսկ անցեալի նկատմամբ՝ սուտը, չափազանցութիւնը և սօփեստութիւնները անդօր են մոլորեցնելու: Այդ պատճառով մենք խորհուրդ կը տայինք ամեն մի հային կարգալ ծայրէ ի ծայր Երիցեանի վերջին աշխատութիւնը, որի վերնագիրը դրած է մեր յօդուածի սկզբում և որի երկրորդ մասը վերաբերում է Կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի (1831—1842) օրերում պատահած անցքերին և հայ հոգեւորականութեան ներքին կեանքին: Իսկ մենք, հիմնվելով այդ գրքի վրա, ներկայ յօդուածում կը բաւականանանք այդ ժամանակվայ մի համառօտ տեսութեամբ:

Կարբեցի Յովհաննէսը մանկութեան և պատանեկութեան օրերը վաճառեալ էր անցկացրել և նրանց մթնոլորտում մեծացել: Սաղմոս, Ժամագիրք բերան անելով և «փոխ» սակ կարողանալով՝ նա երեւակայում էր զիտութեան դադաթնակէտին հասած: Գիտութիւնը նա համարում էր այն, ինչ որ իր ազէտ զլիւսում կար: Կուսակրօնութիւնը այն ժամանակներում էլ զիւրին ճանապարհ էր հարստանալու: Կարբեցին այդ ճշմարտութիւնը շատ լաւ էր իւրացրել: Կեանքի նպատակ դնելով՝ փող դիզել և իր ազգականներին հարստացնել, նա կուսակրօնութիւն ընդունեց և յետոյ, իբրեւ վարդապետ, շրջեց զանազան կողմերում «նուիրակութիւնով», որի շնորհով բաւական մեծ հարստութիւն ժողովեց: Փողը օգնեց նրան եպիսկոպոս ձեռնադրվելու: Լինելով բնութիւնից սահմանափակ և բարքով ստոր՝ նա ոչ մի այլ գաղափար չունէր, բացի մամօնայի երկրպագութիւնը և սնամիտութիւնը: Փողը նա համարում էր ոչ միայն ամենազօրեղ միջոց, այլ և ամենամեծ նպատակ:

Այդ ազէտը, դեռ եփրեմ կաթողիկոսի կենդանութեան ժամանակ, ձգտում էր կաթողիկոսական աթոռին: Փողի միջոցով նա աշխատում էր Երեւանի սարգարի աջակցութիւնը ձեռք բերել՝ կաթողիկոս դառնալու: Ասիական երկիրներում մեծացած սարկի նման, նա որչափ զոռոզ էր ստորադրեալի հետ, նոյնչափ քծնող, շողոքորթ՝ հզօրների առաջ: Պատկեզի և իշխան Վ. Բէհրուդովի հովանաւորութիւնն էր աշխատում գրաւել՝ հրաժարված Եփրեմի փոխարէն 1831 թւին կաթողիկոս ընտրվելու համար: Եւ այդ աջողակեց, հակառակ ուսաստաց ինտելիգենցիայի, ժողովրդի, Եփրեմի և Թիւրքաշայերի ցանկութեան, որը Ներսէս Աշտարակեցու կողմն էր: Թիւրքաց հայերը յետոյ էլ չը հաշտվեցին և վճռեցին՝ հաւասարիմ մնալով Էջմիածնին՝ չը ծանաչել Յովհաննէսի կաթողիկոսութիւնը:

Տգէտ, անընդունակ, անձեռնհաս, հալածատէր և կաշառակեր Կարբեցին մի և նոյն ժամանակ այնքան մասն և

նախանձօտ էր, որ Ներսէսին վնասելու համար կանգ չէր առնում ոչ մի ստորութեան առաջ: Բռնելով Թիֆլիսից հեռացրված Ներսէսի առաջնորդական տեղը, նա, ժողովրդի աչքում իր հակառակորդի վարկը վայր դրելու համար, դիմեց մի չարագործութեան. — քանդեց ազգի լուսաւորութեան միակ ճրագը, նրա շինած Ներսիսեան ուսումնարանը, խլեց դպրոցի եկամուտները, 5 դասարանի փոխարէն թողեց 2 դասարան, 400 աշակերտների թիւը հասցրեց 160-ի, 11 ուսուցչի փոխարէն բաւականացաւ 3 ուսուցիչներով: Ուսումնարանի ընդարձակ շինութիւնը յանձնեց զինուորական վարչութեան. Կօջօր ամարանոցը, որի մի քանի հազար դեսիաւինը Ներսէսը դնել էր 500 բուբլով յօդուա իր ուսումնարանի՝ Կարբեցին ընծայեց իր բարեկամ Սիպեաղին և Պանկրատիել զենեքալներին: Չը բաւականանալով դրանով՝ ինքն զրպարտում, բամբասում էր Ներսէսի հիմնած ուսումնարանը և ամեն ջանք դործ էր դնում դպրոցը փակելու համար:

Արծաթսիրութիւնը այնքան մեծ էր նրա մէջ, որ կաթողիկոս դառնալով հանդերձ, դեռ մինչև օծումը, Թիֆլիսում աշխատեց իր վերջին հունձը հնձել: Այն թեմում, ուր 14 տարի Ներսէսը ստիպված էր ոչ ոքի քահանայութիւն չը տալ (այնքան մեծ էր նրանց թիւը)՝ Կարբեցին իր առաջնորդութեան օրից անխափր ամենքին կոչում էր քահանայութեան՝ — «աջահամբոյրի» մասին համաձայնութիւն կայացնելուց յետոյ: Առաջնորդարանում ամենայն օր սակարկութիւն էր կատարվում և առաջարկված գումարի քանակութիւնը ծածկում էր քահանայացուի ազիտութիւնը և անբարոյականութիւնը: Իր մտերիմ քահանաներին, որոնցից ամեն մէկը մի քանի հազար «աջահամբոյր» էր հաւաքում վեհի համար տէրաէրացուներից, — նա առատ-առատ պարգեատրում էր:

Ականատես Մսեր մադիստրոսը վկայում է, որ «արդիւնք, որք համբուրեցին զսրբամաքուր աջ սրբազան զիտին Յովհաննու ի քահանայից մինչև էր ի Տիֆլիս՝ հասաւ

5075 թումանի (23 հազար բուբլի): Օրինակելի և ազդեցողա-
ջերմեռանդութիւն... Կարբեցին ուղում էր նաև թեմերը
սակարկութեամբ յանձնել առաջնորդներին, բայց իշխանու-
թիւնը արգելք դրեց:

Հաւաքելով 50,143 բուբլի՝ Էջմիածնի վանքի 24,800
բուբլու պարտքի դիմաց, նա, Էջմիածին հասնելով՝ ոչ մի
կօպէք այդ դումարից չը միտեց Էջմիածնի վրա, այլ բոլորը
իւրացրեց, իսկ պարտքերի համար դիմեց կառավարութեան՝
դանձարանից փող խնդրելով և փոխարէնը զրաւ դնելով
վանքերի կալուածքները: Վանքը, եկեղեցին խորթ էր նրա
սրտին. ինչ գումար ընկնում էր իր ձեռքը՝ համարում էր
իր և ազգականների սեփականութիւն:

Վանքը մտնելու օրից Կարբեցին սկսեց հալածել Ներսէսի
կողմնակից հոգեւորականներին, որոնք միակ արժանաւոր
պաշտօնեաներն էին այն ժամանակ, և իրան շրջապատեց
տգէտ, ստոր, շողքորթ և արատաւորված աբեղաներով,
որոնց առաջ էր քաշում և հարստացնելու համար՝ «նուխ-
րակութեան» ուղարկում ու պաշտօններ տալիս:

Իբրև ասիական բռնաւոր, այդ կաթողիկոսը արդարա-
դատութեան մասին գաղափար չուներ: Իր միահեծան իշխա-
նութեամբ, քմբի և հաճոյքի համաձայն, կարգադրում էր
ամեն բան, համարելով ազգը իր ծառան, իսկ եկեղեցին՝ իր
սեփական տունը: Սքսորական Ներսէսը Քիշինեկից լուռ և
թախծալից դիտում էր այդ բոլոր ազգամիտս խայտառակու-
թիւնները և միայն ժամանակ առ ժամանակ արհամարհա-
կան և սուր երգիծական գրութիւններով էր խայթում այդ
ողորմելի ուղուրպատօրին: Ժողովուրդի և միաբանութեան մէջ
ընդհանուր զգոհութիւն էր տիրում: Կ.Պօլսը չէր յիշա-
տակում նրա անունը. նոյն իսկ նրա կողմնակից հացկատակ
արարածները հայհոյում էին նրան ետեւից և միայն երեսից,
անձնական շահերից կուրացած, շողքորթում, քծնում էին:
Իսկ այդ միամիտը կարծում էր թէ մեծ բանի վրա է՝ ան-
պիտաններին առաջ քաշելով և լաւերին հալածելով...

Ձը տանելով բոլոր անկարգութիւնները և կամայակա-
նութիւնները, Էջմիածնի միաբանութիւնը վերջապէս ընա-
րեց 8 հոգի, որ կաթողիկոսի հետ բանակցեն: 1833 թւի
նոյեմբերի 10-ին ընտրվածները խմբովին ներկայանում են
կաթողիկոսին մի բողոքադրով, որից բերում ենք մի քանի
կէտեր:

Նրանք բողոքում են.

1) Որ կաթողիկոսը փոխանակ ընդհանուրի շահը և
հասարակութեան բարօրութիւնը նպատակ դնելու, «առանց
որոյ ոչ մի իշխանութիւն չէ օրինաւոր և չէ հաճելի Աստու-
ծոյ»—անձնական քմահաճութեամբ է դործում, ոչնչացնելով
և վանքի այն «սահմանադրական կառավարութիւնը», որ
հաստատել էին Դանիէլ և Եփրեմ կաթողիկոսները, համա-
ձայն ազգի և միաբանութեան ցանկութեան այն նպատակով,
որ վերջ դնվի կաթողիկոսների և նրանց սիրելի Ֆաւօրիտ-
ների քմահաճ, անձնիշխան անօրէնութիւններին:

2) Ոչ մի հասարակագոյա կարգադրութիւն կամ դործ
չէ կատարվում և անկարգութիւնները ոչ միայն չեն վերացն-
վում, այլ և խրախուսվում են:

3) Փոխանակ վանքի պարտքերը վճարելու և նրա
չքաւոր դանձարանը լցնելու՝ Կարբեցին ձգտում է անվերջ
արծաթ և ոսկի զիղել՝ յատկապէս սեփական գոյքը և զանձն
աւելացնելու և իր աշխարհական ազգականներին հարստաց-
նելու նպատակով: Ոչ միայն կանօնաւոր հաշիւ չէ տալիս,
այլ ընդհակառակն. միշտ աշխատում է ամեն դէպքում և
զանազան անվայել միջոցներով վանքի սեփական գոյքից և
և դանձարանից էլ մի բան աւելցնել իր սեփական դանձին:

4) Միաբանութեան մի մասին աչառութեամբ և թշնա-
մաբար է վերաբերվում, հրապարակով անարգում ու մեղա-
դրում է նրանց սնտաի ու սուա պատճառաբանութիւններով
և թշուառացնում է միաբանութեան դրութիւնը:

5) Անարժաններին, անձնական շահերից դրդված, բար-
ձրացնում է և պաշտօններ տալիս, ըստ իր հաճոյից և

քմաց, առանց հետեւելու Դանիէլ-Եփրեմի սահմանադրական ուղղութեան:

6) չրաժարած Եփրեմին մարդու տեղ չէ դնում, նրա խորհուրդներին չէ դիմում և զրկել է նրան կաթողիկոսական պատւից ու հեռացրել վեհաբանից:

Եւ, առհասարակ, ոչ միայն ոչինչ հոգս չէ տանում խառնվածքի գործերը կարգի բերելու, հաշուեհաշուութիւն մտցնելու, անարժաններին և տգէտներին քահանայանալու դէմն առնելու, այլ և ինքն սեփական բարքով զայլակող-ցուցիչ օրինակ է դառնում այլոց համար և զանազան անբարոյական, լիբր անձանց երես է տալիս ու վանքում պահում:

Եւ այլն և այլն և այլն:

Բողոքատուները վերջն աւելացնում են. «Քաջ դիտե-նալով, որ ծածկված վերքերն անբուժելի են մնում, բարւոք համարեցինք բանալ այդ վերքերը, որպէս զի բժշկական դարման դալի», և ապա առաջարկում են միջոցներ՝ ախրող անկարգութիւններին վերջ դնելու համար:

Երևանի նահանգապետ իշխան Բեհբուլթովը, որը ևս ժողովրդի համար մի ցաւ էր, Կարբեցուն պաշտպանելու միակ միջոցը դտաւ՝ անբաւականներին հեռացնելը Էջմիած-նից, թէև ինքն խոստովանւում էր թէ՛ «կաթողիկոսին ա-մենեւին ազատ չէ համարում վերողորեալ մեղադրանքներից, բայց և այնպէս Կարբեցին աւելի պիտանացի կարող է լի-նել, քան թէ ուրիշ ոք»...

Առհասարակ հայոց եկեղեցա-վարչական գործերում ախրող ասիական անկարգութիւնները ոչ միայն զգուցեցրել էին լաւ հորեորականներին, այլ և կրթված աշխարհական-ներին, նոյն իսկ հասարակ ժողովրդին: Դեռ Էջմիածինը պարսից ձեռքումն էր, որ 1805 թւին մօսկվաբնակ Մինաս Լազարեանցը աշխատում էր համոզել Դանիէլ կաթողիկոսին, որ ասիական անձնիշխան կամայականութիւններին վերջ դնվի՝ կօլլեզեալ հաստատութիւններով և որոշ կարգ ու կանոններով:

Եւ Դանիէլը պատասխանում էր թէ. «Կամիմ զի կեն-դանոսցին օրէնք և կանօնք առաքելոց և հայրապետաց սրբոց, վասն որոյ զայս առաջի առնեմ որպէս հիմն, զի կա-թողիկոսն առանց եպիսկոպոսաց և եպիսկոպոսք առանց կաթողիկոսի մի ևս իշխանացին յայսմ հետէ եղա կան կամօք իւրեանց իշխանաբար առնել ինչ գործ՝ որ իցէ պատկա-նեալ եկեղեցւոյ հայաստանեայց կամ հայոց Ազգի»: Նա մինչև անգամ առաջարկեց ընդհանուր միաբանութեամբ ընտրել եպիսկոպոսներից և վարդապետներից «Ժողով», որ լինի դա-տաւոր սիւնհոգոսի և ծայրագոյն պատրիարքի վրա «ըստ կանոնաց հայոց»:

Սակայն նրա աջակից Ներսէսի ցանկութիւնը՝ մի ընդ-հանուր հայկական եկեղեցական ղերագոյն «Ժողով» ունե-նալը՝ չիրագործվեց և, երբ Էջմիածինը 1828 թւին անցաւ ռուսաց ձեռքը և Կարբեցին կաթողիկոս դարձաւ, Պատկե-վիչը, վերջ դնելու համար ախրող անկարգութիւններին, կազմեց մի զաղանի «Կօմիտետ» Կարբեցու մերձաւոր անձե-րից — իշխան Բեհբուլթով, կաթօլիկ Շահան Զրպետեանց, կաթօլիկութիւնից դարձած Սերովբէ վարդապետ և կաթօլիկ Օչկին պաշտօնեան, — մշակելու հայոց եկեղեցու վարչութեան համար ընդհանուր կանօնադրութեան (Պօլօժէնիէի) նա-խագիծը:

Զը նայած որ ռուսաց կայսրների ցանկութիւնն էր՝ բարձրացնել Էջմիածնի հեղինակութիւնը և տալ նրան այն-պիսի սահմանադրութիւն, որով ըստ կարելոյն պահպանված լինէին հայոց եկեղեցու աւանդութիւնները և իրաւունք-ները, «որ անշուշտ թանգ էին ժողովրդի համար» — բայց, տարաբաղդաբար, ոչ կաթողիկոսը, ոչ էլ նրա առաջարկած պապական ոգով կրթված արբանեակները կամ բուրբօն Բեհբուլթովը՝ ձեռնհաս էին ուսումնասիրելու և ըմբռնելու հայոց ժողովրդական ազատ եկեղեցու ոգին:

Հասկանալի է թէ ի՞նչ ուղղութեամբ նախագիծ պէտք է մշակէր այդ «Կօմիտետը»: Բարեբաղդաբար, Պետերբուրգում

մինիստրների խորհուրդը չը համաձայնվեց նախագծի շատ մասերի հետ և հարկ եղաւ Պետերբուրգում հիմնել նոր կօմիտեա, որը երեք-չորս տարի աշխատելով մտքեց նախագծի մէջ փոփոխութիւններ յօդուա հայոց եկեղեցու: Այդպիսով Պօլօժէնիէի բոլոր պակասաւոր կողմերի պատասխանատւութիւնը ընկնում է հայ հոգեւորականութեան ազդեցութեան և կատարեալ անձեռնհասութեան վրա: Ինչ կարելի էր սպասել մի հոգեւորականութիւնից, որի գլուխը՝ կաթողիկոսը, Նիկողայոս կայսրի բարեհաճ հարցին էջմիածնում, 1837 թիւն թէ՛

— «Ի՞նչ կամիք խնդրել ինձնից ձեր եկեղեցու և հօտի բարօրութեան համար»:

Պատասխանել էր.

— Շնորհել իմ երկու եղբորորդւոյ՝ Թէփումովներին ռուսական շքանշաններ, որպէս զի ազնուական դառնան...

Կամ ի՞նչ սպասել մի կաթողիկոսից, որը, բարօն Բօզէնին հաճոյանալու նպատակով, էջմիածնից ուղարկում է Թիֆլիս նրա կնոջ համար կաթողիկոսների հին թանգաղին թաղը և երբ յետ է ստանում զարդարած արգէն հասարակ ապակու կտորներով, մեծագին ակնեղէնների փոխարէն, — լռում է: Ի՞նչ կարելի էր սպասել մի հոգեւորականութիւնից, որը փողի համար պատրաստ էր ամեն ստորութիւն յանձն առնել և որի հրէշաւոր ազդեցութեան, նախանձի և ապիկարութեան չափի մասին միայն հայ խեղճ ազգը զաղափար ունի, որովհետեւ միայն նա է տուժել այդ կղերից:

Ճիշդ է, «Կանօնադրութեամբ» արտաքին, ձեւական կարգ և կանօն մտաւ մեր եկեղեցավարչական գործերում, սակայն ներքինը՝ հին, ասիական կամայականութիւնը մնաց, որովհետեւ հոգեւոր իերարխիայի պաշտօնեայից միայն փարաջա էր պահանջվում և ոչ մի մտաւոր բարոյական ցենզ: Հասկանալի է, որ կօնսիստօրիաները դարձել

էին ժողովուրդը կեղեքող հիմնարկութիւններ, ուր «ստօրօժից» սկսած մինչև առաջնորդը կաշառք էին վերցնում:

Ամեն չըհաս՝ հաս էր դառնում, ամեն մի տգէտ՝ քահանայ, նայելով տուած գումարին: Եկեղեցական գոյքերն ու կալուածները յափշտակվում էին. արդարութեան նշոյլ չք կար: Կամայականութիւնը թագաւորում էր սոսկալի անամօթութեամբ և միայն շողոքօրթ, խնկարկող մամուլն էր պակաս...

Ամբողջ հոգեւորականութիւնը խորին ազդեցութեան մէջ էր ընկղմված, վանքերը ռուսոմիտրան, տպարան չունէին, իսկ կաթողիկոսը չէր էլ մտածում այդ շուայլութիւնների մասին: Մսեր մազիստրոսը պարզամտութեամբ բացատրում է կաթողիկոսի և եպիսկոպոսների ռուսոմտելութեան պատճառը այսպէս.

«Ի ծագել լուսաւորութեան ի գունդս աբեղայից և սարկաւազաց ըստ օրինի այլոց ազգաց, ոչ զնոյն համարումն յարգանաց մարթէին գտանել զինքեանց եպիսկոպոսքն՝ զոր ինչ այժմ: Քանզի յօդունց յեպիսկոպոսաց և վարդապետաց թէպէտ և չիցեն ուսեալք, սակայն զոլով այժմ ի գերագոյն պատուի և պաշտաման, զոր օրինակ ի դանձապետութեան, յաւագ լուսարարութեան, ի դարպասնութեան, և այլն, ի համարի են յաչս միաբանից և բնակչաց Վաղարշապատոյ և վկային լինել արժանիք առաջնորդութեան, նուիրակութեան և կաթողիկոսութեան, որոյ վասն իսկ վայելեն ի մեծագոյն բարութիւնս և օրըստօրէ առաւելուն պատիւ փառաց իւրեանց. իսկ ի բանիլ աչաց միաբանից լուսով իմաստից, յայտնի է՝ թէ այն համարումն կամ բնաւ իսկ ոչ մնայր առ նոսա, և կամ փոխարկիւր յայլ իմն. քանզի կամաւ կուրանալ՝ կամաւ կորանալ՝ ոչ ամենեցուն է, բայց այն ոցիկ միայն՝ որ ոց կամ արտաքին և կամ ներքին կուրացեալ իցեն աչք:»

Իմաստուն խօսքեր...

Հնդկաստանի հայերը, կարգաւորվ Պ օլօ Ժէնիէն, ուղարկում են իրենց ղեկավարութիւնները, որոնցից գլխաւորն այն էր, որ ոչ միայն կաթողիկոսական ընտրութեան համար պէտք է ղեկմել ընդհանրական ազգային ժողովին վճռին, այլ և ուրիշ կարեւոր ազգային-եկեղեցական խնդիրներում, համաձայն հայոց եկեղեցու հին սովորութեան. որովհետեւ հայոց եկեղեցին երբեք չէ ընդունել պապական եկեղեցու կղերական ղերիշխանութեան կամ անսխալականութեան զաղափարը: Կայսրն իմանալով այդ դրութեան մասին, հրամայեց պահանջել կաթողիկոսի կարծիքը յիշած յօդուածների մասին: Ի՞նչ պէտք է պատասխանէր տղէտ, անձեռնհաս կաթողիկոսը իր անպէտք շքախմբով...

Մի քանի ժամանակից յետոյ մեռաւ Կարբեցին 80 տարեկան հասակում, կտակելով իր անձնական հարստութիւնը իր ազգականներին: Նա մեռաւ ամենավատ յիշատակ թողնելով իր փնասակար. դործունէութեան և անձնական արատաւոր բնաւորութեան շնորհիւ: Նրա դժբաղդութիւնից չը կար այն ժամանակ խաւարամիտ մամուլը, որ խնկարկէր նրան և նրա չարագործութիւնները սրբացնէր պապական կղերի աչքակապութեամբ և անսխալականութեան զաղափարով: Իսկ շատ շուտ, ինչպէս ժողովուրդն իր առողջ դատողութեամբ, այնպէս և պատմութիւնը իր անաչառութեամբ՝ կարգացին իրենց դատաւիճիւր...


1895 թ., Յունիս:

III.

ԻՆՉԻՐ ՀԱՄԱՐ ԵՆ

Թիւրքիայում զանազան քրիստոնէական դաւանութեան ներկայացուցիչներ օգնութեան ձեռք են կարկառում թշուառ հայ զոհերին, միսիօնէրները ժողովում են մանուկներին իրենց հիմնած որբանոցներում, հաց և շոր են բաժանում քաղցած տղւորներին, դումարներ են հանգանակում դրանց օգնելու համար: Իսկ ի՞նչ են անում մեր վարդապետները և մեր եպիսկոպոսները. ո՞ր վանքում են որբեր խնամել, ո՞ր վանքում տղւոր, քաղցած և հիւանդ թշուառներին ապաստան տուել:

Տասնեակ հազար հայեր իրենց կեանքը ազատելու համար մահամտականութիւն են ընդունում: սովը և հիւանդութիւնը կոտորածների պակասն են լրացնում: մի քանի հազար որբ մանուկներ փողոցներն ընկած մռնում են... ահա սոսկալի իրականութիւնը: Միայն բոլորովին խուլերն ու կոյրերը բաղդաւոր են իրանց զգում, որ ոչ լսում են և ոչ տեսնում: Սակայն, ինչպէս երեւում է, այդ կոյրերին և խուլերին մրցակից են և Ֆիդիկայէս աւելի քան առողջ մարդիկ, որոնք կազմում են մի դասակարգ այդ թշուառ հայ ազգի մէջ: Այդ դասակարգը հայ հոգեւորականութիւնն է, որը միշտ ձգտել է և այժմ էլ ձգտում է առանց զօհաբերութեան առաջնորդ և տէր հանդիսանալ համայն ժողովուրդի: Դիտեցէք իրականութիւնը և կը տեսնէք որ, տարաբաղդաբար, չափազանցութիւն չը կայ մեր խօսքերի մէջ:



Սակայն ո՞ր օրվայ համար են դարերի ընթացքում վանքերին հայ ժողովրդից նուիրված կալուածները, ոսկին և արծաթը. ո՞ւմ համար են վանքերի շէնքերը իրենց քաջառողջ աբեղաներով ու վարդապետներով: Մի՞թէ ժողովրդի ազխտութիւնը և յիմարութիւնը նուիրադործող տիրացուարանների համար են այդ բոլորը, մի՞թէ իրենց անձնական վայելչութիւնների համար են միաբանները, մի՞թէ բանկերում անձնական հարստութիւններ գիպելու նպատակով են վեղար դրել իրենց գլխներին մեր եպիսկոպոսները:

Ինչի՞ն էր հարկաւոր հայ ժողովրդին Երուսաղէմի պարտքերը վճարելով զբաղվել, ինչի՞ն էր հարկաւոր նրան մշտական նուիրատուութիւններով վանքերը շէն պահելու մասին մտածելը, ինչի՞ն էր հարկաւոր միջոցներ տալ կուսակրօններին առանց անձնական հոգսերի ապրելուն, եթէ սե օրերին այդ բոլորը, — թէ վանքերը և թէ վարդապետները, — նրա համար նոյնքան նշանակութիւն պէտք է ունենային, որչափ Նեղոսի կոկորդիլոսները: Ինչի՞ն են հարկաւոր ժողովրդին գերմանական աստուածաբանները և միջնադարեան դաղափարներով սնված ապուշ վարդապետները, որ այս ճգնաժամին անգամ շարունակում են միջոցներ վասնել զանազան անմիտ ձեռնարկութիւնների վրա...

Երուսաղէմ, ա. Կարապետ, Վարդա, Աղթամար, Սիս, Արմաշ և այլն և այլն հարիւրաւոր անուններ, որոնք այս րօպէիս միայն ամօթ շարժող սե կէտեր են արիւնով ներկված մի երկրի քարաէզի վրա: Իսկ Ռուսաստանում՝ Էջմիածին, Մոզնի, Սեան, հառիճ, Երնջակ, Սանահին, հաղպատ, հաղարծին, Ամարաս, Գանձասար, Նախավկայ, Թովմայ և այլ շատ վանքերի անունները իրենց բազմաթիւ միաբաններով և ընդարձակ կալուածներով ի՞նչ են մեզ ասում այս ճգնաժամին: Այդ վանքերից ո՞ր մէկումն է որբանոց բացվել, ո՞ր մէկում միաբանութիւնը սէր և դուրս է ցոյց տուել տառապեալ զաղթականներին, ո՞ր մէկում են մտածել դործ, աշխատանք տալ թշուառներին:

Մի՞թէ քիչ հողեր կան անմշակ, քիչ անտառներ կան յափշտակիչներին մատնված, քիչ փլատակներ կան կարօտ վերաշինութեան, քիչ այգիներ՝ կարօտ խնամքի: Քիչ տեղեր կան, որոնք ապաստան և բնակավայր կարող էին լինել թշուառների համար, քիչ ալիւր կայ ամբարներում, զինի մառաններում, պանիր և իւղ օշնակներում...

Հարցնում ենք ձեզ, հայր սուրբեր, ո՞ր օրվայ համար էք դուք, ո՞ր օրվայ համար են ժողովրդի հալալ աշխատանքով շինած վանքերը իրենց հարստութիւններով, որոնց ժառանգել էք դուք, մոռանալով, որ այդ «փարաջի գին» է, այլ ժողովրդի սե օրերի ապահովութիւն:

IV.

ՎԵՂԱՐԱՒՈՐԸ ՄԵՐ ԿԵԱՆՔՈՒՄ

Մասսայի մէջ քննադատական ընդունակութիւնը թրմրած է. նրա դպրոցը՝ սնահաւատութիւնների ու նախապաշարմունքների աշխարհն է կամ՝ դարերի սահմանափակ փորձը: Այդ աղբիւրներից նա չէ կարող ձեռք բերել պատշաճաւոր պատրաստութիւն՝ որոշելու համար իր անելիքը հասարակական կամ քաղաքական բարդ խնդիրներում: Այդ է պատճառը, որ նա ղեկավարների է կարօտ. այդ է պատճառը, որ նա լսում է թէ ի՞նչ է խորհում իր «ղլուխը»՝ ինտելիգենցիան:

Ժողովրդի զրկանքների և ազիտութեան հաշւով ինքը լուսաւորվելով՝ ինտելիգենցիան կարող է օգտակար լինել նրան երկու պայմաններում: առաջինը՝ երբ այդ ինտելիգենցիան աւելի է հետաքրքրվում հասարակական հարցերով ու ժողովրդի վիճակով, քան կարիքով ու բուրժուական կօմֆօրտով, և երկրորդ՝ երբ վերոյիշեալ խնդիրները կեանքի մէջ իրականանալուց առաջ ենթարկվում են բաղմակողմանի և ազատ քննադատութեան: Տարաբաղդաբար մեր մէջ **չը կան այդ երկու պայմանները, ուստի մեր ժողովրդի «ղլխի»** ինտելիգենցիայի համոզմունքների մէջ՝ տիրում է բարեխոնեան խառնակութիւն և շրջապատող իրական պայմանների մասին՝ մանուկի հասկացողութիւն: Ի՞նչ է դրա հետեանքը, — մի կացութիւն, ուր ամեն բան կիսատ-պռատ, ողորմելի և անկերպարան է...

Մենք փոքրիկ աղջ ենք, ուստի մեզ զբաղեցնող խնդիրներն էլ փոքրիկ են, չը դադարելով առաջնակարգ նշա-

նակութիւն ունենալ մեր ժողովրդի բարօրութեան համար: Մեր ինտելիգենցիայից ով վիթխարի, «համաշխարհային» բաներ է սիրում, նա, ի հարկէ, ուշադրութեան չի առնի մեր կեանքի չարն ու բարին... Այսպէս թէ այնպէս, մեր կեանքում մի այդպիսի չարն ու բարին է և մեր հոգեւորականների խնդիրը, որը քանի քանի անգամ արծարծվել է, առանց որ և է հիմնական լուծում ստանալու նոյն իսկ տեսականապէս, որովհետեւ մինչև այժմ էլ ամենահակասական կարծիքներ են տիրում ներքին խնդիրներով հետաքրքրվող մեր սակաւաթիւ ինտելիգենցիայի մտքերում՝ մեր կղերի նշանակութեան մասին:

Վերջերս դարձեալ այդ հարցի մասին մտքերի փոխանակութիւն եղաւ «Մշակի» մէջ պ. Խ. Մալուժեանի մի յօդուածի առիթով, որի մէջ պաշտպանվում էին հետեւեալ երկու թեզիսները.

1) Կուսակրօն հոգեւորականութիւնը դուրս է ժողովրդից, դործ չունի, մի աւելորդ դասակարգ է այժմ, ապա ուրեմն՝ ոչ մի ինտելիգենտ, ժողովրդին ծառայելու զաղափարով վառված անձ, չէ կարող և չը պէտք է համաձայնվի լինել անգամ մի այդպիսի դասակարգի:

2) Քահանայական դասակարգը թէև կապված է ժողովրդի հետ, թէև կարող էր մեծ ծառայութիւն մատուցանել ժողովրդին, բայց այժմ նա զրկված է այդ ոյժից, որովհետեւ նրա շարքերը լցվեցին աղէտներով, իսկ արժանաւորները հալածանքի ենթարկվեցին, ուստի չէ կարելի և չը **պէտք է խորհուրդ տալ ուսում առած, օրինաւոր և անխլ մարդուն մտնել մի շրջան, որից ժողովուրդը չէ զրաւվում:**

Այս երկրորդ թեզիսի վերաբերմամբ բոլորովին համակարծիք լինելով «Մշակի» աշխատակից պ. Ա. Հարոնեանի հետ, թոյլ եմ տալիս ինձ առաջին թեզիսի դէմ առաջ բերել իրականութիւն ից այնպիսի փաստեր, որոնք հակասում են պ. Մալուժեանի պնդումին: Կար-

դացէք ոչ միայն մեր ուրիշ պարբերական հրատարակութիւնների, այլ և կղերականութեան հակառակ «Մշակի» էջերում լոյս տեսնող թղթակցութիւնները, թէ Ռուսաստանի և թէ արաասահմանի հայաբնակ տեղերից, և դուք կը տեսնէք, որ նրանց մեծ մասը նուիրված է յատկապէս վեղարաւորների զործունէութեան: Եթէ վեղարը ժողովրդից կտրված լինէր և նրա հետ զործ չունենար՝ անհասկանալի կը լինէր այնքան զրեւն ու խօսելը այդ դասակարգի մասին: Ինչո՞ւ ազգը ողորկում է մի Իզմիրեանով և վրդովվում Սշղեանով: Ի՞նչ փոյթ ժողովրդին՝ արդեօք Սշտարակեցու նման կաթողիկոս կընտրվի, թէ անբան Կարբեցու: Ի՞նչ փոյթ՝ մի թեմում Կարապետն է առաջնորդ, թէ Արիստակէսը: Ի՞նչու այնքան պէտք է ցաւէր ժողովուրդը, որ Մուշկի հեռացրվել է մի Խարախանեան վարդապետ, կամ որ մի Ալէքսանդրեան եպիսկոպոս բռնութեամբ զըրկվեց կաթողիկոսութիւնից: Ի՞նչու հէնց «Մշակը» այնքան ջանք է զործ դնում համոզելու ում անկ է՝ կարգին առաջնորդ ուղարկելու Ստրպատական: Ինչո՞ւ մեր երկու կուսակցութիւնների պայքարում այնքան տեղ է բռնում էջմիածինը: Ինչո՞ւ Նալբանդեանից սկսած մինչև Արծրունին՝ այնքան զրկել է ու խօսվել մեր եկեղեցու պաշտօնեաների մտաւոր ու բարոյական մակերեւոյթի բարձրացման մասին: Ինչո՞ւ... Բայց իմ միտքը պարզելու համար հերիք են և տուած հարցերը, որոնցից հետեւում է, որ վեղարը մեր իրականութեան մէջ դեռ ունի նշանակութիւն. — մի տեղ ժողովրդի զաւակների կրթութեան զործն է կախված նրանից, միւս տեղ ամուսնական խնդիրներն են կապված նրա հետ, երրորդ տեղում վանքական կալուածներն ու զիւղերն են մասնված նրա կամայականութեան, չորրորդ տեղ վեղարաւորն է օրէնքով ընդունվում իբրեւ ժողովրդի ներկայացուցիչ ու կառավարող և նրա ձեռնհաս կամ անընդունակ լինելուց է կախված մի հօտի պաշտպանութիւնը դայերից և այլն...

Եթէ վեղարը իրականապէս նշանակութիւն չունենար մեր ժողովրդի կեանքում, չը շփվէր նրա հետ և նրա զործը լինէր միայն, ինչպէս պ. Մալումեանն է ասում, «աղօթել վանքերում», այն ժամանակ ի՞նչ փոյթ մեզ, որ վանքերի կիսակործան աւերակներում, բացի բուերից և չղջիկներից բնակութիւն են հաստատել և լոյսից փակցող մարդիկ... Որ վանքը ինչպէս մի հիմնարկութիւն, ինքն ըստ ինքեան, մեր հանդամանքներում, չէ խանդարում մեծ ծառայութիւն մատուցանել ազգին՝ դրան ապացոյց Սշտարակեցին, Վարժապետեանը, Ալեշանը, Այաղնեանը և շատ ուրիշ վանականներ, որոնց անունները օգտակար, թէև համեստ զործիչների թւին են պատկանում:

Ձէ կարելի բացարձակ պնդել, որ յիշեալ անձերի զործունէութեան մէջ բնաւ նշանակութիւն չեն ունեցել վեղարի հետ կապված որոշ պայմանները, — մի դէպքում, օրինակ, օրէնքի տուած լիազօրութիւնը, իսկ միւս՝ զուր ոյժեր կլանող մանր մոնըր աշխարհային հոգսերից աղատ լինելը: Մեր արդի աշխարհային կեանքը իր անարդար զոյութեան կռով մի այնպիսի իդէալական բան չէ ներկայացնում, որ նրանից հեռանալը ինքն ըստ ինքեան արդէն պախարակելի լինէր, եթէ այդ հեռանալու նպատակն է ամբողջապէս նուիրվել ժողովրդի ծառայութեան կամ զիտութեան: Ժողովրդին ծառայելու դադափարով վառված մի լուսաւոր առաջնորդ պակաս օգտակար չէ, քան նոյնպիսի մի փաստաբան, ինժեներ, կամ բժիշկ: Իւրաքանչիւրը զործունէութեան իր շըրջանում կարող է և վնասակար լինել, և օգտակար: Իսկ թէ վեղարաւորը մեր իրականութեան մէջ դեռ ևս զործունէութեան ասպարէզ ունի, դա փաստ է, որի հերքումը հակասութեան մէջ պէտք է դրի մեզ:

Այդ պատճառով բոլոր էութեամբ դէմ լինելով կղերական զերիշխանութեան, այնուամենայնիւ համոզված ենք, որ ներկայ մեր պայմաններում վեղարը կարող է, հրաժարվելով իր դասակարգային շահերից և «աստուածաբանութիւնից», մեծ ծառա-

յութիւն մատուցանել մեր ժողովրդին, որովհետեւ զրա համար նա ունի իր ձեռքում այնպիսի միջոցներ, որոնցից շատ զէպքերում զուրկ է աշխարհականը: Ես չեմ ասում, որ վեղարը միակ զործօնն է մեր կեանքի մէջ, այլ թէ՛ նա ևս զործօն է:

Մարդկութիւնը, բաց առած անհատները, հաղարաւոր դարերի ընթացքում փոփոխել է իր աստուածներին, իր հաւատը, բայց թէ երբ նա ամբողջապէս կամ մեծ մասամբ իր աշխարհայեցողութեամբ Միլլ կամ Րընան կը դառնայ՝ այդ ուսուցիչները իմանալու բանն է. իսկ մենք զիտենք, որ այժմ և դեռ երկար ժամանակ տիրելու են կարգեր, որոնք մեր իրական միջնավայրն են կազմում:

Թէև Եւրոպայում տիրում է քննադատելու կատարեալ ազատութիւն, թէև նրա անկախ ժողովուրդները շատ և շատ առաջ են զնացել, բայց համոզվելու համար թէ և այնտեղ եկեղեցին դեռ ևս զօրեղ ազդեցութիւն ունի կեանքի մէջ՝ բաւական է մի պտոյտ այդ երկիրներում..

Եկեղեցին իբրև որոշ մի կազմակերպութիւն դեռ ունի բաւական կենսունակութիւն. այդ կազմակերպութիւնը, ինչպէս տեսանք, ժողովրդի հետ զործ ունի, ուստի անտարբեր լինել թէ ովքեր են այդ կազմակերպութեան անդամները՝ յանցանք է ժողովրդի բարօրութեան տեսակէտից: Մեզ համար չը պէտք է մի և նոյնը լինի թէ ով է կաթողիկոս ընտրվել և ազգի մեծամասնութեան ներկայացուցիչ, թէ ով է Պօլսի պատրիարքը, ովքեր են առաջնորդներ թեմերում, ովքեր են սինօդի անդամներ, յաջորդներ, ժողովրդի հետ խօսող քարոզիչներ, վանքերի կալուածների կառավարիչներ և այլն և այլն: Այդ պաշտօնեաներից կարող է ազգի համար և չարիք և բարիք առաջանալ. լուսաւորը, ազնիւը, զործունեան և ձեռնհասը՝ անպայման օգտակար են ժողովրդի համար և ընդհակառակը՝ շատ տուժել ենք և աւելի կը տուժենք տգէտ, աւազակ, ծոյլ և մտքով ու կամքով անդամալոյծ դառած վեղարաւորներից:

Արդ, ինչպէս այս բոլորը իմանալով հանդերձ ինտելիգենցիան իրան թոյլ տայ սառնասրտութեամբ ասել ժողովրդին. դնա՛ խաչվիր անարժան հոգեւորական պաշտօնեաների ձեռքից, որովհետեւ մենք, ինտելիգենտներս, ոչ մի կերպ «չենք կարող և չը պէտք է» այդ դասակարգի մէջ մտնել: Եթէ մեր ինտելիգենցիան ամենից քիչ մտածում է հասարակական զործերի վրա, թողնելով նրանց պատահականութեան և իրերի բնական հոսանքին և վաճառականի նման մտածուէ թէ ubi bene, ibi patria *) (այդ patria-ն հասկանալով ոչ այնքան տեղագրական մտքով, որքան՝ զործունէութեան), եթէ նա չունի հասարակական խնդիրների մասին որոշ և հիմնաւոր համոզմունք և իրական պահանջներին համապատասխան տակաւիկա, եթէ նա չունի տոկունութիւն ու եռանդ որոշ ծրագիր իրագործելու, — թող նա չը զարմանայ, որ վեղարն էլ այն չէ, ինչ կարող էր լինել: Իսկ թէ արդարեւ վեղարը կարող էր աւելի օգտակար լինել՝ այդ պարզ է թէ եղած օրինակներից, թէ մեր կեանքի ծանօթութիւնից և թէ, մանաւանդ, մեր եկեղեցու ընտրողական սկզբունքի խելացի զործադրութիւնից: Իսկ այդ սկզբունքի զործադրողը դարձեալ ինտելիգենցիան է, որովհետեւ նա է ղեկավարողը, ժողովուրդը նրան է լսում և նա ոչ միայն պէտք է ձեռքից բաց չը տայ այդ փրկարար սկզբունքը, այլ և մաքառի՝ նրա խախտման զէպքերում:

1898 թ., Մայիս:

*) Ուր էստ, այնտեղ՝ հայրենիք:

V.

Կ Ղ Ե Ր Ի Դ Ե Ր Ը

«Մշակի» № 104 և 105-ի մէջ կարդացինք պ. Գ. Կ.-ի մեզ ուղղած զայրացկոտ «բաց նամակը», և զարմացանք, տեսնելով որ «քաղաքակրթված Եւրօպայում հարիւրաւոր պառլամենտներ կատարած» մեզ անձանօթ պարոնը մնացել է նոյն կրքոտ ասիացին, ինչպէս և երբէք Եւրօպայի երեսը չը տեսած կինսօները, որոնք առանց վերաւորական ձեւերի անկարող են մի բանի մասին վիճել: Մեզ թվում է թէ պարոնը իր մտածողութեան եղանակով շատ հետաքրքրական տիպ է... բայց թողնենք վիպասաններին զբաղվել այդ տիպով և առ այժմ ծափահարենք պարոնի այն բուռն պատասնեկական ոգևորութիւնը, որով նա (հոգ չէ որ անտեղի) դրուատում է արդէն անթիւ անհամար անգամ արձակ ու ոտանաւոր ձեռով փառաբանված «լոյսն» ու «մարդկային առաջադիմութիւնը»: Սակայն այդ ի՞նչ սարսափելի վտանգ է սպառնում «մարդկային առաջադիմութեան» կամ ի՞նչ սեղեւեր են շրջապատել ճշմարտութեան արեգակի պայծառ «լոյսը», որ մեր քաջ զինուորը կտուրի վրա կանգնած և զէնքի տարօրինակ շահիւնով ու խրոխտ գոչիւններով ուզում է պաշտպանել «լոյսն» ու «մարդկային առաջադիմութիւնը»... Այդ ի՞նչ սոսկալի դժ է, որը փորձում է ընկճել մարդկային հզօր միտքը, այն միտքը, որը չէ վախեցել աստուածների շանթերից, որը նուաճել է ծովի կատաղի ալիքները, թափանցել է անսահման տիեզերքը, խորատուզվել է երկրի միջուկը, որը մարդ արարածին դժ է տուել իր կամքին

հնազանդեցնելու ոչ միայն վեթիսարի փղին, արիւնածարաւ վազրին և ամեհի առիւծին, այլ և անսահման բնութեան անսպառ ուժերը: Ո՞րն է, ասացէք, մարդկային մտքի այն ահեղ թշնամին, որը ինկվիզիցիայի անաջող փորձերից յետոյ՝ այժմ, շողիի և էլեկտրականութեան դարում, սպառնում է նրան կաշկանդել...

— Հայ վարդապետի վեղարը, պատասխանում է մեր քաջ հակառակորդը, հայոց ողորմելի կղերը, ասում է նա:

Եթէ, ընթերցող, չէիք սպասում այսպիսի ծիծաղելի վախճան և կարծում էք թէ լուրջ չէ մեր ասածը՝ այն ժամանակ առաջարկում ենք նորից կարդալ պ. Գ. Կ.-ի իր տեսակի մէջ շատ նշանաւոր յօդուածը: Թէ ի՞նչ հանգամանքներ են ստիպել մեր քաջ ախոյեանին այդպիսի տարօրինակ չափազանցութեան դիմել, կամ ի՞նչ պատճառներ են եղել նրա երեսկայութեան մէջ այդպիսի հրէշաւոր ուրուականներ ստեղծվելուն՝ այդ, կարծում ենք, դժուար չէ հասկանալ, եթէ ի նկատի ունենանք մարդկութեան ապագայի համար պարոնի ունեցած երանելի տենչանքները... Ի հարկէ, այդ «համամարդկային բարօրութեան» տեսակէտից է, որ նա դեռ ևս շարունակում է երկիւղ կրել կղերականութիւնից. մի ուղղութիւնից, որը վաղուց անչափահասներին վախեցնող խրդուիլակների շարքն է անցել և կորցրել է մարդկային հասուն, ազատ մտքի համար վտանգաւոր լինելու հնարաւորութիւնը: Ուրեմն, մեր պատուելին «հին-հին դարուց յիշատակ» մնացած կղերականութիւնից է սարսափում:

Արդարեւ, կար ժամանակ, երբ այդ հրէջք կաշկանդում էր մարդկային մտքի ազատ թռիչքները: Այդ եւրօպական ազգերի մանուկ շրջանումն էր: Կաթօթիկ կղերը մարդու անհանգիստ, համարձակ ոգին իր բուռնցքի մէջ պահելու համար՝ իշխանութիւն էր ձեռք գցել և նրա մարմնի վրա: Հռօմի քահանայապետը դառել էր ոչ միայն «Փրկչի փոխանորդ», այլ և՛ թագաւորների թագաւոր: Սակայն կղերի գերիշխանութիւնը կամ կղերականութիւնը

տեւեց մինչեւ եւրօպական մաքի չափահաս դառնալը: Սրա առաջին անկախ քայլերից արդէն սկսվեց տատանվել կղերի գերիշխանութիւնը, ապա ընթերցման և արեւմտեան կայս- ների մաքառումը պապերի դէմ՝ ջախջախեցին կաթօլիկ թէօկրատիայի տիրապետութիւնը: Պապին մնաց միայն հա- ռաչել՝ «աւանդ, փառացս անցաւորի» և ժողովելով իր «տէ- րութեան» ողբալի մնացորդները՝ ապաստան որոնել մաս- սայի հաւատալէքների մէջ: Սյժմ էլ պապը ջանքեր է դործ դնում վերականգնել իր աշխարհական իշխանութիւնը, դրա համար նա օգտվում է կաթօլիկ եկեղեցու միջազգային դիրքից, դրա համար նա զանազան երկիրներում իր կղերից և ջերմեռանդ հպատակներից կազմակերպում է բաւական զօրեղ կուսակցութիւն, որը սակայն դիտէ ժամանակի պահանջների հետ ընթանալ, դրա համար պապը ստիպված է նախկին գոռոզ բռնակալից, — որի դռան առաջ, բակում, զլխաբաց, ձիւնի վրա ոտաբոբիկ կանգնում էին նրա ցա- սումը իրանց վրա յարուցող կայսրները, — դառնալ ուրիշ բան, և Վատիկանի արդի ներկայացուցիչները միայն ճար- պիկ դիպլոմատների դերով պէտք է բաւականանան...

Բայց դիպլոմատիան էլ, ի հարկէ, ոյժ է, ուստի կղե- րականութիւնն այժմ էլ իր մասին խօսել է տալիս՝ թէ՛ Իտալիայում, որի բաղաքական միութիւնը վերջ դրեց պապի աշխարհական իշխանութեան, որով և յարուցեց նրա բար- կութիւնը, թէ՛ Իրլանդիայում, ուր նա ոգեւորում է կաթօ- լիկ մասսայի ազգայնական ձգտումները, թէ՛ Գերմանիայում, ուր նա դեռ զօրեղ կուսակցութիւն է և, ի միջի այլոց, պաշտպան է հանդիսանում լեհացիների ազգային դպրոցնե- րին, և թէ՛ Ֆրանսիայում, ուր նրան ի նկատի պէտք է ունենայ ամեն մի նոր կառավարութիւն և այլն և այլն: Ուստի եւրօպական լիբերալիզմը դեռ չարունակում է ար- թուն հսկել նրա վրա և, բացի դրանից, վաղուց այնպիսի խոչընդոտներ է դրել կղերականութեան դէմ, որ դուրս գալ սոսկ հոգեւորականի դերից նրան բաւական դժուար է: Իսկ

սոսկ հոգեւորականի դերը մեծ է լինում կամ փոքր նայած մաս- սայի զիտակցութեան չափին կամ զարգացման աստիճանին:

Ահա ամենատիպիկական և ուժեղ կղերականութեան ներկայ վիճակը:

Իսկ այլ եկեղեցիների կղերի գերիշխանական ձգտումների մասին իսկապէս չարժէ անդամ խօսել, այնքան նրանք թոյլ են, անսխառն ու անինքնուրոյն: Յայտնի է, որ ոչ բողոքական, ոչ էլ օրթօդօքս եկեղեցիները կարողացան մի ուժեղ կենտրոն ստեղծել և միջազգային դիրք, անկախ կազմակերպութիւն ունեցող մի կուսակցութիւն դառնալ: Սյդ եկեղեցիները շատ շուտ բաժան-բաժան եղան, և՛ կամ ազգայնացան, կամ դա- ռան պետական հաստատութիւններից մէկը:

Սյդպէս, հին ժամանակ անջատվեց յունաց եկեղեցուց հայոցը, բոլորովին ազգայնանալով: այդպէս դեռ մեր աչքերի առաջ ազգայնացան բօլգար, սերբ և բուլին եկեղեցիները, խզելով իրենց արդէն թոյլ կապը յունաց եկեղեցուց: Եւ այդ եղաւ այն ժամանակ, երբ այդ ազգերն դանվում էին իսլամի լծի տակ և ինքնավարութեան նշոյլները միայն եկե- ղեցու միջոցով էին արտայայտվում: Սյժմ ի հարկէ ուրիշ դործոններ աւելի աջող կատարումեն ազգայեն եկեղեցու նախկին դերը, ուստի կղերը չունի այն նշանակութիւնը, որ ունէր նա մինչև ազգային անկախութիւն ստանալը:

Սյդպէս և բողոքական եկեղեցիները ամեն ազգի մէջ նրա բնաւորութեան համեմատ ձևեր ստացան:

Իսկ Անգլիայում՝ բողոքականութիւնը և Ռուսաստա- նում՝ օրթօդօքսութիւնը, հանդիպելով զօրեղ աշխարհական իշխանութիւնների, դառան պետական կրօններ և կղերը մտաւ պետական պաշտօնեաների շարքը: Սյդ երկրների թա- զաւորները դառան և եկեղեցու գլուխ: Ուրեմն, բողոքական և օրթօդօքս եկեղեցիները մի տեղ ենթարկվում են ժողովրդի մեծամասնութեան ցանկութիւններին, միւս տեղ կախված են տիրող կառավարութեան ընթիմից: Խօսել «կղերականու- թեան» մասին այս դէպքերում կարելի է միայն որոշ պա-

րազաներում, իսկ ընդհանրապէս կղերը անկարող է իբրեւ առանձին դասակարգ կուսակցութիւն կազմել և ժողովրդից կամ պետութիւնից անկախ նպատակներ ունենալ, որովհետեւ նրա դերը կրաւորական է:

Ինչպէս տեսանք մի քիչ տարբեր բնավորութիւն ունեն այն արեւելեան եկեղեցիները, որոնց հօտերը դեռ տառապում են մոսուլման թէօկրատիաների ձեռքում: Ռայան այդ երկիրներում ունի մի քանի ինքնավարական իրաւունքներ, որոնք սերտ կապված են նրա կրօնի հետ, ուստի կղերի կապը աւելի ևս զօրեղ է այդ երկիրների մասսայի կեանքում: Այդ է պատճառը որ Բալկանեան թերակղզու քրիստոնեաները ձգտումէին՝ նախ քան քաղաքական անկախութիւնը՝ ձեռք բերել ազգային ինքնազուլիս (աւտօկեֆալ) եկեղեցիներ: Բայց հէնց որ ջախջախվեց իսլամի բռնութիւնը եկեղեցին և կղերը Բուլղարիայի, Սերբիայի և Բուլղարիայի համար կորցրեցին քաղաքական նախկին մեծ նշանակութիւնը, իսկ այլ զործոնները առաջնակարգ տեղ բռնեցին:

Իսլամն ազդութիւն չէ ճանաչում, ուստի հայ-լուսաւորչականները, հայ-կաթօլիկները, հայ-բողոքականները թիւրքիայում և Պարսկաստանում համարվում են առանձին առանձին կրօնական համայնքներ: Վեղարն այդ երկիրներում, բացի սոսկ հոգեւորական լինելուց, աշխարհական որոշ իշխանութեան ներկայացուցիչ է, նա ազդապետ է ճանաչվում: Ահա ցաւալի իրականութիւն, որը նախ պէտք է ընդունել, իբրեւ փաստ, իսկ յետոյ ով կարող է թող և անտես անի նրան ու զործի իր սիրած ճանապարհով: Այդ իրականութեան արտայայտութիւն են այն անթիւ թղթակցութիւններն մեր թերթերում այդ երկիրներից, որոնք «ազգային» նիւթի մասին խօսելիս չեն կարողանում առանց հոգեւորականների զործերը քննադատելու անցնել:

Ուրեմն ի՞նչ է դուրս դալիս, պ. Գ. Կ.: Ուրիշ ոչինչ, բացի այն, որ կղերականութեան հարցում ձեր փոխ վերջրած շաբլօնները շատ են ընդհանուր և հեռու իսկութիւնից, որովհետեւ ներկայումս նոյն իսկ ամենա-

զօրեղ կաթօլիկ կղերականութիւնը ոչինչ չէ կարող անել առաջադիմական զործոնների դէմ: Իսկ պապականութիւնից դուրս կղերը ոչ մի տեղ անկախ կուսակցութիւն չէ կազմում, այլ կախված է մի տեղ ժողովրդի մեծամասնութիւնից, միւս տեղ պետութեան ընդհանուր բեթիմից, որոնցից դուրս այդ երկրներում կղերը հող չունի իր ոտերի տակ: Այդպէս ուրեմն՝ „Не такъ страшенъ чертъ, какъ его малюютъ“, և իւրաքանչիւր ժողովուրդ տարբեր պատմական հասարակական միջնավայրում է ապրում, ուրեւն և կղերի դերը ամեն տեղ մի և նոյնը չէ:

Եթէ հարկաւոր լինի մէկին ցոյց տալ հայ մասսայի «անշարժութիւնը», դրա համար, կարծում ենք, բաւական կը լինէր մասնանիշ անել այն ղեկնաւոր խրճիթները, որոնց մէջ նա այժմ էլ այնպէս է ապրում իր տնային կենդանիների հետ միասին, ինչպէս երբեմն Քրիստոսից առաջ Քսենօֆոնն է նկարագրել հայերի կեանքը: Տեղը չէ քննել հայի «անշարժութեան» բուն պատճառները, յամենայն դէպս կղերը չէ, ինչպէս ասում է պ. Գ. Կ.: Նա էլ դուցէ որոշ մաս ունեցել է՝ բայց այդ մասնակցութիւնը համեմատած այլ պատմական ու աշխարհադրական զործոնների հետ՝ շատ չնչին է և դեռ ով դիտե, եթէ կղերի դրական և բացասական նշանակութիւնները դումարենք, դուցէ և աւելին դրականի կողմը կը լինի, քան թէ բացասականի:

Սակայն դառնանք մեր քաջ ախոյեանի «տրամաբանութեան»: Անչափ ահ կրելով կղերից՝ պ. յօղուածագիրն իր բոլոր դայրոյթն ու թոյնը թափում է մեզ վրա, կարծելով որ մենք նրա «պաշտպանն» ենք և «զործով» չենք ուղղում մաքառել նրա դէմ, չենք «ցաւում» տեսնելով կղերի ազդեցութիւնը և այլն և այլն: Այդ երկար և ոգեւորված մեղադրական ծառից յետոյ պէտք էր հետեւցնել, որ ինքը պ. Գ. Կ. ոչ միայն «խօսքով», այլ և «զործով» ուղղում է մաքառել կղերականութեան դէմ: Այդպէս է մեր՝ հասարակ մահկանացուներին լօղիկան, բայց պարօնի «տրամաբանական ճանա-

պարհը» տարօրինակ եղբակացութեան է հասցնում: «պէտք է մի կողմ նետել կղերի հարցը», նրանով չը զբաղվել: ուրեմն՝ թողնել, որ Սլլահն ինքը կամ ճակատագիրն անեն իրենց գիտցածը: Սհա՛ ձեզ և «գործով» մաքառում:..

Իսկապէս եթէ մի կողմ թողնէք պարոնի յօդուածուս լուր-մուրը, կողմնակի պտոյտները, հակառակորդին իր գլխից հնարած բաներ վերագրելու տղեղ սովորութիւնը և լիբրիական ղեղումները, մասամբ էլ սրախօսութիւնները, տակին կը մնան վերեւ յիշածի նման «տրամաբանական» դոհարներ: Հետաքրքրական է այդ դոհարների այլ նմուշների հետ ևս ծանօթանալ:

«Դուք կարծում էք, ասում է մեր հակառակորդը, իբր թէ ինտելիգենցիան է կառավարում մասսան, մինչդեռ իրականութեան մէջ առաջինը հետեւում է վերջինի տրամադրութեան, առանց որին նա մի քայլ անդամ չէ կարող անել»: Այդ խօսքերից յետոյ պէտք էր սպասել, որ եթէ պարոնն առաջարկում է «մի կողմ նետել վեղարի հարցը»՝ նա այդ անում է լաւ տեղեկացած լինելով «մասսայի տրամադրութիւնից», և եթէ մենք հակառակն ենք առաջարկում, դնում ենք մասսայի ցանկութեան դէմ, և մեր քէֆով արուեստական, պարապ հարցերով ենք զբաղված:

Տեսնենք որքան հաստատ է պարոնը այդքան մեծ ապումբով ի լուր աշխարհի յայտնած իր «աշխարհայեցողութեան մէջ»: «Մշակը» № 109-ի մէջ յայտնում է հետեւեալը, բաղելով այդ Պօլսի թերթերի կիսաձայն «միմունջներից».— «Փոքրիկ, համեստ ձայները գալիս են դաւառներից և ամենքը մի և նոյն լեզուն ունեն. երկու կամ երեք բառով, շատ անգամ հաւաքանքի մի մի հաս շեշտով նրանք ձեզ տալիս են հարիւրաւոր ցաւերի անուն... Եւ այդ բոլոր տեղական մանր թէ խոշոր պակասութիւնների վրա տարածված է մի ընդհանուր, համատարած հեծեծանք — մարդ չը կայ, մարդկանց կատարեալ սով է: Ի՞նչ տեսակ մարդիկ են դրանք, որոնք այնքան հարկաւոր են թշուառացած դաւառներին, քայց որոնք չը կան, չեն ճարվում: Ժողովուրդը տալիս է այդ

մարդկանց անունը: Բանից դուրս է գալիս, որ կղերի, ի հարկէ, պարտաճանաչ բանիմաց կղերի սովն է, որի մասին այնքան միաբան և միահամուռ աղաղակներ են տարածվում»:

Այժմ պ. Գ. Կ. իր տեմպերամենտին յատուկ տօնով, երևի, կը դիմի «մասսային», ասելով. — «Գլուխդ քարով և տալիս, անբան մասսա, այդ ի՞նչ միջնադարեան մարդիկ են դու պահանջում: Ես քեզ առաջարկում եմ մի կողմ թողնել դրանց և համաշխարհային, վեհ խնդիրներով երազողներին հրաւիրել. դու պէտք է սովորես օգտվել մեծ ու փոքրի մէջ խտրութիւն չը դնող դիտութեան կօնցերախի»: Եւ շուտաւաստ մեր մասսան այդ բոլորից միայն մի բան կը հասկանայ, որ իբրեւ թէ «խտրութիւն չը կայ մեծի ու փոքրի» մէջ, մինչդեռ իր կաշւի վրա նա դարերի ընթացքում, ի սկզբանէ անտի, փորձել է և դիտէ որ «խտրութիւն» դժբախտաբար կայ «մեծի և փոքրի», «հօրի և թոյլի մէջ»... Պարոնի յիշած անմահ Դարվինն էլ զոյութեան կուր իր օրէնքով նոյնն է հաստատում:.. Եւ իրականութիւնն այն է, որ մշեցի Մկոն չէ կարող օգտվել դիտութիւնից, ինչպէս Պարիզի Միշէլը... Այո, խտրութիւն կայ. ցանկալի է, որ չը լինէր, բայց կայ և ձեր դեկլամացիաները մազի չափ չեն փոխում այդ իրական անհաւասարութիւնը: Դառն իրականութեան մէջ զանազան ժողովուրդների զոյութեան պայմաններն իրար նման չեն, ինչպէս նման չէ և նրանց զարգացման աստիճանը: Այդ պատճառով որոշ ժամանակ, որոշ հանգամանքներում մէկ ժողովուրդի համար նշանակութիւն ունեն այնպիսի պահանջներ, որոնք միւսի համար կամ վաղուց անցել են կամ դեռ ևս հասունացած չեն: Ժողովուրդների կեանքը բաղմամբիւ գործօնների շատ բարդ կօմբինացիաների արդիւնք է, ուստի առանց լուրջ և բաղմակողմանի ուսումնասիրութեան այնքան էլ հեշտ չէ խելացի տակտիկա որոշել, վճռել՝ «թէ ի՞նչ պէտք է անել»: այլապէս խելօք թութակները շատ մեծ դերեր կը կատարէին... Առանց ինքնուրոյն մտածողութեան, առանց ուշք դարձնելու իւրաքան-

չիւր ժողովրդական կեանքի առանձնայատուկ պայմաններին, չէ կարելի աջող գործ տեսնել, բաւականանալով ուրիշ կեանքից փոխ վերցրած շարժական, պատրաստի դեղատոմսերի (րեցեպաների) գործադրութեամբ. այլապէս յօնքը շինելու տեղ, կարելի է աչքն էլ հանել...

Եւրօպական ժողովուրդների կեանքում այժմ, օրինակ, վայրենութիւն կը համարվէր վիճել թէ ազնիւ, կրթված հոգեւորականը աւելի օգտակար է, քան ազէտն և չարագործը: Գլադստօնի մտքով անգամ չէր կարող անցնել, որ իրան կը մեղադրեն, թէ ինչո՞ւ իր ազնիւ, կրթված որդին քաջանայութիւն է անում, կղերական է... բայց մենք «երկրագնտիս երեսին դեռ չը տեսնված հրաշք ենք», և գլուխ ենք կտորում՝ «լաւն է լաւ, թէ վատն է լաւ» խնդրի վրա: Ժողովուրդը պահանջում է այն, ինչ որ լաւ է համարվում, իսկ նրան ասում են. «այն լաւը քեզ ձեռնտու չէ, վերցրու վատթարը:» Եւ այդ բոլոր դարձեալ կղերականութեան երկիւղից:

Մենք չենք ուրանում, որ ռուսահայերիս կեանքում, Մակար կաթողիկոսի օրով, նկատելի ղյժ ստացաւ մի արուեստական հոսանք էջմիածնում: Կաթողիկոսի շուրջ խմբված մի քանի «ուսեալներ», Օրմանեանի օրհնութեամբ, ձեռնարկեցին պատրաստել մեր ժողովրդական եկեղեցու համար մի նոր պատուաստ. կղերական գերիշխանութիւն բարոյող նոր սերունդ: Մեր բոլոր եկեղեցական գործերում այդ օտարամոլա պատուաստը շուտով մտցրեց այնպիսի խառնաշփոթութիւն, որ Թիւրքիան անգամ կարող էր նախանձել... Խորխոսվելով այդ «նոր» սկզբունքից, այն ազէտները՝ որոնք մինչև այդ ժամանակ քաշվելով էին մութ գործեր կատարում, սկսեցին այնուհետև իրենց զաղեր արարքները «ուսեալներից» սերտած «կղերի գերիշխանութեան» սկզբունքով ծածկել: Այդ սկզբունքը ասում էր թէ բաւական է, որ մէկը զլինի վեղար ունենայ, ուսերին փարաջայ, որ լիազօրութիւն ստանայ առանց ժողովրդի կամքին նայելու և առանց արդարութեան ձայնը լսելու, ինքնիշխան կարգադրել դպրո-

ցական, եկեղեցական, քաջանայական, կալուածական, ամուսնական և այլ խնդիրները, ըստ իր անքննադատելի հայեցողութեան: Ահա այն կղերականութիւնը, որը պատուաստվեց և շատ չարիքների պատճառ եղաւ, զխաւորապէս ժողովրդի հասկացող մասի վարանող և անհաստատ ընդդիմադրութեան շնորհիւ: Թիւրքահայոց կեանքում, ուր ժողովուրդն է ընտրում պատրիարքին, առաջնորդներին և յաջորդներին, և ինքը ժողովուրդն է դրանց հրաժարեցնում, կղերն իսկապէս անկարող պէտք է լինէր յիշած ուղղութիւնը արտայայտել. այդ պատճառով էլ «կղերականութեան» մասին խօսել այնտեղի համար, նշանակում է՝ ընդգծել մասսայի անդիտակցական վիճակը: Բայց դրա դէմ դարձեալ լսվում է պ. Գ. Կ.-ի ձայնը:

«Վեղարը, ասում է յօդուածագիրը, չէ կարող հրաժարվել իր դասակարգային շահերից. իսկ հակառակ պարագային դա կը լինէր երկրագնտիս երեսին չը տեսնված մի հրաշք»: Այլ խօսքերով և ուրիշ տեսակէտից պարոնը հաստատում է նոյնը, ինչ որ մինչև այժմ էջմիածնի յայտնի «գործիչները», և ինչ որ լսում էինք զանազան Կիւրեղներից ու Կարապետներից: Սակայն տեսնենք արդեօք պարոնի զարդարուն նախադասութիւնը ակիւսմա կամ զուտ ձշմարտութիւն է, թէ... սիրամարդի փետուրներով դեղեցկացած մի ոգորմելի ազուաւ:

Պարոն յօդուածագիրը ինչպէս երևում է շփոթում է երկու տարբեր հասկացողութիւններ. պաշտօն կամ գործունէութիւն և շահասիրութիւն կապված այդ պաշտօնի հետ: Պարզենք տարբերութիւնը մի օրինակով, որը վերցնենք աշխարհական, դասակարգի՝ օրինակ, բժշկների նկատմամբ: Բժշկի գործն է, ուրեմն և պաշտօնը՝ բուժել հիւանդներին, իսկ նրա «դասակարգային շահերն» են՝ ունենալ շատ հիւանդներ, ստանալ մեծ վարձատրութիւն, դէմ լինել ձրի հիւանդանոցներին, պահանջել բժշկների համար զանազան արտօնութիւն և այլն: Ինչպէս տեսնում էք բժշկի այդ «դասակարգային շահերը» ուղղակի հակառակ են հասարակականին. բայց կարգին, ազնիւ բժիշկը ներկայպայմաններում

անգամ խոյս է տալիս այդ շահերից: Կարող է մի գեղեցիկ ու երջանիկ օր բժշկութիւնն ստանալ այնպիսի ձեւ, երբ ամեն մի մարդուն համայնքը ձրիաբար կը տայ ամենալաւ բժշկութիւն, երբ բժշկութիւնը լայն հասարակական ձեռնարկութիւն կը դառնայ, և համայնքից ապահովված բժշկներն առիթ չեն ունենայ «գասակարգային շահից» և հացի խնդրից դրդուած՝ հիւանդների մէջ խնտութիւն գնել, չեն երկարացնիլ տկարութիւնը... Ուրեմն, կարող են ժամանակով «գասակարգային շահերը» համարեա ոչնչանալ, թէև պաշտօնը, բուժելը կը մնայ, քանի դեռ հիւանդանալը մարդկային բնութեան թոյլ կողմերից մէկն է: Այս օրինակի անալօգիայով կարելի է եզրակացնել, որ կարելի է վերացնալ հոգեւորական պաշտօնի հետ կապված «գասակարգային շահերը», թէև հոգեւորական կոչումը կը մնայ, քանի որ մարդկային մասսաները ունեն հաւատ...

Վերցնենք, օրինակ, մի առաջնորդ, որը աւելի միջոցներ ունի արտայայտել «գասակարգային շահեր»: Առաջնորդի դործը, պաշտօնը՝ թեմ կառավարելու մէջ է կայանում, ուրեմն պէտք է ունենայ նա վարչական ընդունակութիւն և՛ յայտնի զարգացում և ազնւութիւն: Արդ, կարող է նա, այդ վեղարաւորը, կատարել ստանձնած պաշտօնը, «հրաժարվելով գասակարգային շահերից», թէ ոչ: Մեր հակառակօրդի կարծիքով հրաշք կը լինէր, եթէ նա հրաժարվէր իր «գասակարգային շահերից»: Բայց որոնք են մեզանում այդ շահերը, որոնցից իբր թէ առաջնորդը կարող չէ հրաժարվել—որչափ կարելի է շատ տգէտ քահանաներ ձեռնադրել, թեմի դպրոցները կամայական կերպով ղեկավարել, վանքապատկան կալուածները անխօստօլ կառավարել, կաշառքով հասըհասը կարգադրել, ժողովրդի վրա անսահման տիրելու լիազօրութիւն ունենալ և այլն: Այդ բոլոր ձգտումները հակահասարակական են և դէմ ժողովրդի շահերին, ուրեմն և նրա «ժողովրդական» եկեղեցուն, բայց, ասացէք, այս քաջագործութիւններից ո՞րն է բղիւում հէնց «վեղարի տակից». չէ՞ որ

դրանք ղեղձումներ են, իրաւազանցութիւններ, որոնց դէս պէտք է մաքառի ինքը հասարակութիւնը. իսկ մեր կղերի «գերիշխանական ձգտումները» ոչ անկախ պապի վրա են հիմնված, ոչ էլ առանձին կղերական զօրեղ կուսակցութեան պաշտպանութիւնից կախված, որովհետեւ ժողովուրդը de jure ում ուղենայ տիրացու կրնարի, ում ցանկանայ՝ կը դարձնի կաթողիկոս:

Ուրեմն, ինչպէս ինքը հասարակութիւնն է միջոցներ ձեռք առնում մի բժշկի կամ այլ աշխարհական պաշտօնեայի գասակարգային շահերի հակահասարակական արտայայտութիւնների դէմ, այնպէս էլ ինքը հասարակութիւնը կարող է սահմանափակել վեղարի կամայականութիւնները: Ինչպէս բժշկութիւնը չէ փաստվում, այլ աւելի ևս օգտվում է, երբ սահմանափակվում են բժշկների գասակարգային շահերը, նոյնպէս և, օրինակ, մի առաջնորդի դործունէութիւն աւելի օրինական և արդիւնաւոր է դառնում, երբ սանձահարվում են նրա կամայականութիւններն ու անձնական շահերը: Բայց, ի հարկէ, տուէք հնարաւորութիւն թէ՛ բժշկին, թէ՛ ինժեներին, թէ՛ վեղարին՝ անխափան անել, ինչ որ ձեռնտու է իւրաքանչեւ գասակարգին և կը ստանաք մի կացութիւն, ուր մէկը միւսին կուտի:

«Բայց ո՞ր մնաց աստուածաբանութիւնը», հարցնելու է մեզանից պ. Գ. Կ., «չէ՞ որ վեղարը չի կարող հրաժարվել աստուածաբանութիւնից նոյնպէս, ինչպէս բժիշկը—բժշկութիւնից, ինժեները—ինժեներութիւնից և այլն: Սրա դէմ ի՞նչ կասէք»:

Եթէ ձեր ասածը ճիշդ լինէր, պ. Գ. Կ., այն ժամանակ ոչ թէ Սահակները, Մեսրոպները, Ներսէսները, Աշտարակեցին, Վարժապետեանը, Ալեշանը, Այտրնեանը, Իզմիրլեանը և դրանց նմանները պէտք է մեր հոգեւորականութեան պարծանք լինէին, այլ այն նոր տիպի մեր «աստուածաբան-փարգապետները», որոնց հռչակը այնքան տխուր է: Եթէ ձեր ասածը ճիշդ լինէր՝ լաւ քարոզիչներ չէին համարվելու մի Խորէն

Ստեփանէ կամ Խրիմեան վարդապետ, որոնք «աստուածաբանութեան մէջ» (ի պատիւ զրանց պէտք է ասել) բորիկ են, այլ զանազան «աստուածաբան» Օրմանեաններ և Կարապետ վարդապետները: Եթէ ձեր ասածը ճիշդ լինէր՝ ամեն մի կաթողիկոսից, պատրիարքից, առաջնորդից, յաջորդից և քարոզից նախ և առաջ «աստուածաբանութիւն» կը պահանջվէր: Եթէ ձեր ասածը զուտ ճշմարտութիւն լինէր, այն ժամանակ պէտք է ընդունէինք որ Համայն աղղը սխալվել է շատ այնպիսի արժանաւոր հոգեւորականներին լաւ վեղարաւորների շարքում դասելով, որոնք երբեք «աստուածաբանութեամբ» չեն պարապել, երբեք չեն զործադրել ձեր ոչ տէրաւորական և ոչ այլ աստուածաբանութիւնը: Եթէ աստուածաբանութիւնը նոյնքան անհրաժեշտ լինէր վեղարաւորի համար, որքան բժշկութիւնը՝ բժշկի, այն ժամանակ ոչ աստուածաբան հոգեւորականներին, օրինակ՝ Վարժապետեանին, Սլիշանին, Իզմիրլեանին և այլն, պէտք է հաշվէինք կղերի ամենավատ ներկայացուցիչներ, ինչպէս բժշկութիւն չի մնացող բժիշկը այդ դասակարգի ամենավատ ներկայացուցիչն է, մի զիւղական «գալլաք» է և ոչ պատուելի էսկուլապ: Բայց իրականին մէջ վեղարն «առանց աստուածաբանութեան» էլ փառաւորապէս զործ է տեսնում և ոչ ոք չէ հետաքրքրվում, թէ ինչո՞ւ արժանաւոր հոգեւորականները «աստուածաբանութեան» մէջ ձեր «ասէկոսերինից» դէնը չեն գնացել... Տէրաւորն իր ծէսերն է կատարում առանց աստուածաբանութեան, քարոզիչն առանց այդ «աստուածաբանութեան» աւելի կենդանի, սրտառուչ և ժողովրդի ցաւերին մօտ լեզուով է խօսում: առաջնորդը, պատրիարքը, կաթողիկոսն առանց նրա մասին մտածելու անգամ կարող են հիանալի կերպով իրենց դործերը կատարել:

Բայց ինչո՞ւ է այդպէս. ինչո՞ւ զիտութիւնը և աստուածաբանութիւնը նոյն լոգիկական եղրակացութիւնների չեն հասցնում ձեզ: Որովհետեւ մէկից՝ զիտութիւնից՝ միայն կարելի է այս կամ այն մասնաղիտական դործունէութեան

համար անհրաժեշտ հմտութիւնը ձեռք բերել, մինչդեռ աստուածաբանութիւնը, եթէ կամիք, մետաֆիզիկական փիլիսոփայութիւն է, որից, վերջ ի վերջոյ մի հանձարեղ Սպինոզա էլ հաստատապէս նոյնչափ բան կարող է իմանալ Աստուծոյ էութեան մասին, որքան և «Արարատի» անշնորք «աստուածաբանները»... Իսկ զործ տեսնելու համար այդ վերացականութիւնը անպէտք է... Սյնէլ պէտք է չը մօռանալ որ խոր հաւատքը կարող է լինել մարդու սրտում, առանց աստուածաբանութեան և քաղղէհրէական սնահաւատութիւններին, օր. Լ. Տօլստոյի հաւատը...

Ինչպէս մեր կղերի, այնպէս և մեր վանքերի տէրը ինքը ժողովուրդն է: Մեր վանքերն իրենց ընդարձակ կալուածներով ու հարստութիւններով աղղային սեփականութիւն են: Մեր ժողովուրդը դարերի ընթացքում ամբարել է այնտեղ իր խնայողութիւնները, որոնք պէտք է զործադրվեն նրա սե օրերում, որոնք պէտք է ծառայեն ժողովրդի բարօրութեան համար և ոչ փարաջաւորների զեղխութեան: Եթէ ժողովուրդը զիտակցօրէն չէ բմբռնում իր իրաւունքները՝ հասկացրէք նրան, բայց ոչ թէ աւելի ևս պղտորէք նրա միտքը: Ի հարկէ, շատ և շատ ուրախ կը լինէր մեր կղերի մեծ մասը, որ վեղարի հետ «մի կողմ նետուէր» և վանքերի հարցը, որովհետեւ նա, այդ մասը, այնքան դործնական խելք ունի, որ զիտէ թէ «մի կողմ նետուէր» դեռ չէ նշանակում՝ «վերացնել մի դասակարգ և նրա հետ կապված բոլոր հաստատութիւնները»: Այդ անելու համար ոչ միայն Գ. Կ., այլ և տասը հերքուլէսներ միացած նոյնքան Սամսոնների հետ, առանց մասսայի միահամուռ ցանկութեան, առանց արտաքին նպաստող պայմանների, ոչինչ չեն կարող անել, ուրեմն հակառակ ձեր ցանկութեան կղերը կը քնայ, կը քնան և վանքերը, միայն թէ՛ թողված իրենց վիճակին, իրենց սեփական կամքին: Ինչ կուզէ զայլը — մութ զիշեր և թմրած հովիւներ: Ինչ կուզէ անարժան հոգեւորականը՝ մի բան — հասարակութիւնը չը խառնվի նրա դործերում, մամուլը

չը մերկացնի նրա պակասութիւնները և անէն իրենք ինչ կամին...

Բայց պ. Գ. Կ.ն դարձեալ նոր «անհրաժեշտութիւն» է դնում մեր բոլորիս առաջ, համեմելով այդ ինքնակենսագրական ակնարկներով... Նա ասում է՝ կղերք եթէ ուղենայ էլ իսկական ծառայութիւն ցոյց տալ ժողովրդին, նա այդ չէ կարող անել, որովհետեւ ոչ միայն Թիւրքիայում, ուր եղել է պարոնը և շատ բան տեսել, այլ և ամեն տեղ կան կղերի առաջ, անյաղթելի խոչընդոտներ, որոնք իբրեւ թէ վերանում են աշխարհական «սփոփիչներ» զիմաց: «Եթէ, ասում է պարոնը, մեր սակաւթիւ ինտելիգենցիայի մի մասը զիւրի վեղար դնի, միւսը եկեղեցու հետ կապված դանազան ընտրութիւններով զբաղվի, (ինչպէս այդ արաւ 1892 թ. Գրիգոր Արծրունին իր համախոհներով)՝ ի՞նչ կը ֆնայ տակին. դա նշանակում է ուժերը ջլատել»: Կարծես «ընտրութիւններն» են խանգարում այլ հասարակական գործերին նուիրվելու, կարծես վեղարից կամ ցիլինդրից է կախված էդօստ թէ ալտրուիստ լինելը, կարիերիստ թէ հասարակական գործիչ դառնալը. կարծես եթէ չը լինեն այդ «ընտրութիւնները», կը փոխվեն այն տիպի ինտելիգենտները, որոնք ни Богу свѣча, ни черту кощера...

Ուրեմն, պ. Գ. Կ., ի՞նչ է քննում ձեր «նամակից», երբ մի կողմ շարաքննել խնդրին չը վերաբերող մասերը: Միայն այն՝ որ դուք էլ մեզ հետ ընդունում էք, որ կղերք դեռ ևս գործօն է. մի բան, որ մենք առանց ուրախանալու կամ տրամելու, ուղղում էինք ապացուցանել, իբրեւ սոսկ իրական փաստ: Բայց դուք աւելացնում էք, թէ կղերք միայն բացասական գործօն է, ուրեմն՝ չարիք է: Մենք այդ չափազանցութիւն ենք համարում հէնց ձեր սեփական սկզբունքի հիման վրա. մասսան այնքան բթամիտ, անբան չէ, որ իր յօժար կամքով պահպանի բացարձակ չարիքը. ո՞վ է ստիպում աղատ շվէյցարացուն կամ եանքիին դեռ պահպանել եկեղեցիները և, չը բաւականանալով դրանով, միսի-

օնարներ էլ ուղարկել Թիւրքաց հայաստանի նման դժուրք: Ուրեմն պէտք է ընթացիկ, որ մի բան կայ մասսայի հոգում մի պաճառ կայ, որ ամենաաղատ երկիրներում անգամ եկեղեցին շարունակումէ ապրել...

Բայց ընդունենք որ կղերք բացարձակ չարիք է. ունէ՞ք դուք բոլոր եւրոպական ինտելիգենցիայի միահամուռ ջանքերից աւելի մեծ կարողութիւն՝ արմատախիլ անելու այդ չարիքը: Իսկ եթէ ոչ, ի՞նչ էք առաջարկում անել:

Մենք արդէն տեսնք ձեր «մաքառման» նշանաբանը— «մի կողմ նետել այդ հարցը» և այլ բաների մասին մտածել: Բայց զիցուք թէ ձեր այդ առաջարկն էլ ընդունեց ինտելիգենցիան (մասսայի տրամադրութիւնը այս դէպքում ձեզ ձեռնառու չէ) և հեռացաւ, թողնելով ժողովուրդը, նրա եկեղեցին և դրա հետ կապված բոլոր հաստատութիւնները անարժան կղերի լիակատար տրամադրութեան տակ, և ասպարէզը ֆնայ «տղէտներին, աւաղակներին ու դատարկապորտներին»... ի՞նչ էք վստահում դուք ստեղծելով մի նոր Արշակաւան՝ ի մեծ ուրախութիւն հասարակութեան տականքի: Ի՞նչ էք վստահում դուք առաջադիմութեան համար՝ դէմ լինելով մեր նախորդ յօդուածի այս խօսքերին. «Եկեղեցին իբրեւ որոշ կազմակերպութիւն դեռ ունի բաւական կենսունակութիւն. այդ կազմակերպութիւնը ժողովրդի հետ գործ ունի, ուստի անտարբեր լինել, թէ ո՞վքեր են այդ կազմակերպութեան անդամները՝ յանցանք է ժողովրդի բարօրութեան տեսակէտից: Մեզ համար չը պէտք է մի և նոյն լինի թէ ո՞վ է կաթողիկոս, պատրիարք, առաջնորդ... և այլն, որովհետեւ այդ պաշտօնեաներից կարող է ազդի համար և՛ չարիք և՛ բարիք առաջանալ, լուսաւորը, աղնիւր, գործունեան և ձեռնհասը՝ անպայման օգտակար են ժողովրդի համար և ընդհակառակը՝ շատ տուժել ենք և աւելի կը տուժենք տգէտ, աւաղակ, ծոյլ և մաքով ու կամքով անդամալոյծ դարձած վեղարաւորներից»:

Ո՞րը աւելի կը թեթեւցնի ժողովրդի բեռը. մեր, թէ՞

ձեր առաջարկը, որի իրագործումով դուք նրա ոտերից կապում էք մի ապականված, վարակիչ և ախտաւոր դիակ և լետոյ ասում: «դէ՛ պի՛ս քալէ՛, քալէ՛ մարդկային առաջադիմութեան ճանապարհի վրա»...

Ձեր այդ արածը մեզ առասպել է յիշեցնում: Ծնվել էր, չէր ծնվել մի երկրում մի զարմանալի երկուորեակ. իրար մէջքից կպած երկու եղբայրներ, այնպէս որ մէկը առանց միւսի համաձայնութեան և աջակցութեան չէր կարողանում ազատ շարժվել:

— Մի՞թէ կարող է լինել աւելի վատ դրութիւն, քան այդ, մտածում էին տեսողները:

Անցնում են տարիներ. երկուորեակներից մէկը (չը գիտենք ինչ քամու ազդեցութեան տակ) մտածում է անպատճառ ազատվել իր ընկերից և... մեռցնում է նրան: Միայն այդ լանցանքը կատարելուց յետոյ է նա հասկանում, որ այժմ իր դրութիւնն աւելի ևս անտանելի է, որովհետեւ նա ստիպված էր այնուհետեւ իր մէջքի վրա կրել մի նեխված դիակ, որը թունաւորում էր նրա կեանքը ամեն օր, ամեն ժամ...:

1898 թ., Յուլիս:

VI.

ԿԵԱՆՔԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Եթէ կայ մի հաստատութիւն, որի համար ոչ մի նշանակութիւն չունի մամուլը՝ այդ, ինչպէս տարաբաղդաբար անթիւ փաստերն են ապացուցանում, մեր նահապետական կամ աւելի ճիշդ՝ անկարգ հոգեւոր կառավարութիւնն է: Տարիների ընթացքում հայաբնակ զաւառներից ժողովրդի ցաւերին ականատես թղթակիցները հրապարակ են հանում մեր հոգեւորականութեան վերին աստիճանի անձեռնհաս ու անհոգ վերաբերմունքը դէպի իր հօտի կարիքները. տարիներով հրապարակասօսութիւնը՝ որքան ոյժ և միջոց ունի, քննադատում է մեր այդ «իշխանութեան» յանցաւոր ապատիան. սերունդ սերնդի ետեւից գերեզման է մտնում՝ բաղդ չունենալով դէժ մասամբ իրագործված տեսնել այն միջոցները, որ առաջարկել են մեր գործիչները, և այն ծրագիրները, որոնց զուլս բերելու համար մեր հոգեւոր իշխանութիւնը միայն պէտք է պատշաճաւոր պատրաստութիւն ու անձնուիրութիւն ունենար, և թողնէր հին՝ անձնիշխան, անկարգ ու նահապետական ընթիմը և նոր՝ օրինական ու կանոնաւոր ընթացք տար իր գործերին: Սակայն, ինչպէս ամենօրեայ դէպքերն են ցոյց տալիս, ժողովրդի դանդաղանքը, մամուլի քննադատութիւնը, ինտելիգենցիայի սպասելիքներն և գործիչների ծրագիրները մեր կուսակրօն հոգեւորականների համար նոյնքան նշանակութիւն ունեն, որքան հայի ցաւը չինացի մանգարիներին համար: Եւ վհատեցուցիչն այն է, որ մեր նորընծայ կուսակրօնները իրենց զաղափարներով ոչնչով չեն տարբերվում հօտերից: Ժիշդ է, հին խալիֆայական «Ժառանգաւորաց» դպրոցից դուրս եկած վեղարաւորներին փոխարինում են էջմիածնի ձեմարանում կամ Արմաշի վանքում աւարտած «շնորհունակները» և «բարձրապատիւները», որոնք

դաստիարակվել են ու կրթվել մեր «երեւելի» աստուածաբան-ներէի, հայկաբանների և մանկավարժների ձեռքի տակ. բայց մեր հոգեւոր «խերարխիայի» գործունէութիւնը՝ ժողովրդի շահերի տեսակէտից, այժմ ևս նոյնչափ բացասական է, որչափ հնում. որովհետեւ ժողովրդի կենսական ցաւերի համար բնաւ կարեւորութիւն չունեն՝ ոչ միջնադարեան պարապ վէճերով բռնված մեր նոր «աստուածաբանները», ոչ էլ կեանքի փափկութիւնը սիրող թերութեւ և մի և նոյն ժամանակ մեծամիտ փարաջաւոր նոր կարիերիստները: Այսպէս է վկայում կեանքը:

Այն ժամանակ, երբ հեռաւոր երկիրներից գերմանական պատասօրները, կաթօլիկ կրօնաւորները և ամերիկացի միսիօնարները, թողնելով իրենց բաղդաւոր հայրենիքը, շտապում են մի այնպիսի աւերված երկիր, ինչպէս Թիւրքաց հայաստանն է, և այդ թշուառ աշխարհում մի տեղ տկոյր-քաղցած հայ որբերին են խնամում, միւս տեղ անտուն ու թաւլանած հայ շինականին են օգնում, երբորդ տեղ ուսումնարան են բանում. այն ժամանակ, երբ մի Սինադոսիյ բահանայ զաղափարի համար յանձն է առնում գնալ մի այնպիսի խուլ և ռուսի համար խորթ միջնավայրում գործել, ինչպէս Ուրմիան է. այն ժամանակ, երբ Էջմիածնի համարեա քթի տակ, Ատրպատականում, ամբողջ զաւառներ մնում են անհովիւ, առանց քահանաների, յաջորդների, առանց ուսումնարանների և՛ առհասարակ առանց որ և է օգնութեան մեր հոգեւոր իշխանութեան կողմից—ահա՛ այդ իսկ ժամանակ մեր «ուսեալ» սարկաւաղներն ու վարդապետները, մոռանալով ժամանակի պահանջներն ու ժողովրդի ներկայ վիճակը, կամ փախչում են զաւառներից և համալսարաններում «ազատ ունկնդրութեամբ» իրենց ապաղայ կարիերը շտկում, կամ թէ ապահովելով իրենց ապրուստը վեղարով, զբաղված են այնպիսի անմեղ ժամավաճառութեամբ, ինչպէս «Աստուածածնայ վերափոխման» մասին վէճն է...

Անշուշտ Էջմիածնի գործերի համար շատ հարկաւոր են և փորձված իրաւաբաններ, մեր այժմեան տղէտ «աբլա-

կատ» իւրիսկօնսուլտների փոխարէն, հարկաւոր են և բա-նիմաց գիւղատնտեսներ, մեր այժմեան ինքնուս վանահայրերի կամ յափշտակիչների փոխարէն, անհրաժեշտ են և մասնագէտ ուսուցիչներ. բայց երբեք անհրաժեշտ չէ, որ այդ պաշտօն-ները վարող անձինք անպատճառ կուսակրօններից լինեն, նամանաւանդ, երբ ժողովրդի մէջ գործող հոգեւորականների այնպիսի մի սով է տիրում, ինչպէս Թիւրքիայում ու Պարսկաստանում ենք մենք տեսնում: Թողնեք վերացական դատողութիւնները և անհող ցնորքները և նայե՛ք իրական այն չարիքների վրա, որոնց մի մասը օրէնքով կոչված են թեթեւացնելու մեր վեղարաւորները: Դրանց գործունէու-թիւնը յաջորդների, առաջնորդների և քարաղիչների պաշտօնների մէջ է կայանում և ոչ աստուածաբանական վէճերի կամ աշխարհական ուժերին փոխարինելու տարօրինակ և ֆլաստակար տենչի մէջ: Ծիշդ է, կան դեպքեր, որ ամենայարմար ուսուցիչը հէնց նորրնծայ ձեմարանականը կամ արմաշականը կարողէ լինել. օրինակ, Ատրպատականի կամ Վասպուրականի այնպիսի դիւղերում, ուր աշխարհական ուսուցիչ հրաւիրու-անկարող է աղքատ համայնքը, մինչդեռ Էջմիածնի կամ պատրիարքարանի սնդուկից ռոճիկ ստացող երիտասարդ սարկաւաղը կամ աբեղան ոչ միայն կարող է, այլ և բարոյ-յապէս պարտաւոր է այդ տեղերում ուսուցչութիւն անել: Ո՞վ պարտաւոր է այդ մոռացված վայրերում գործել, եթէ ոչ կուսակրօնը: Մինչդեռ, ընդհակառակը, այդ ձեւով դրանք չեն ուղղում փորձառութիւն և ժողովրդականութիւն ձեռք բերել. դրանք ձգտում են այնտեղ, ուր աւելի դիւրին ծանապարհով կարող են փափուկ կեանք վարել: Դրանք՝ նոյն իսկ հակառակ հասարակութեան ցանկութեան, առեւ ճիգ են թապում իրենց քիթը կոխել մեր սեմինարիաների և ձեմարանի տեսչական կամ ուսուցչական պաշտօնների մէջ և զրաւել այն պաշտօնները, որոնց համար ունենք աւելի լաւ պատրաստված աշխարհական բաղմաթիւ ոյժեր, որոնցից Էջմիածինը միայն պէտք է կարողանար օգտվել: Մեր ձեմարանական և արմա-

շական կուսակրօններին, ինչպէս երեւում է, պէտք է յիշեցնել, որ կուսակրօնութիւնը սուտ ճշնաւորութիւն չէ և մանաւանդ՝ անգործասիրութիւն, այլ մի կամաւոր զինուորութիւն, որի նպատակն է՝ անձնազոհութեամբ նուիրվել իր հօտի բարօրութեան համար, գործադրելով այն միջոցները, որ տալիս է ազգային եկեղեցին: Իրանք մոռանում են, որ իրենց յօժար կամքով տուած «ուխտը» բարոյապէս պարտաւորեցնում է իրանց՝ վազել այնտեղ, ուր վտանգ է սպառնում ժողովրդին, ուր միսիթարութեան, սփոփանքի և խրախոյսի է կարօտ ցրված ու ջարդված հօտը: Ոչ թէ կըր ոռծիկն ու փափուկ բարձերը պէտք է դրանց ձգտումներին կէտնապատակը լինեն, այլ ժողովրդի թշուառութիւնների դէմ մաքառելը, որի վերձաստրութիւնը նրանք պէտք է դրանեն այն ներքին բաւականութեան մէջ, որը զգում է աւարուխտը՝ ուրիշին օգնութիւն ցոյց տալով: Այլապէս մեր մէջ իմաստ չունի կուսակրօնութիւնը, եթէ աբեղաները պէտք է միայն աշխարհական ոյժերից գործունէութեան ասպարէզը խլելով կամ պարապ վէճերով զբաղվեն:

Մեզ կարող են ասել, թէ համալսարանների այդ փարաջաւոր «ազատ ունկնդիրների» նպատակն է ոչ մասնագիտական հմտութիւն, այլ միայն «ընդհանուր զարգացում» ձեռք բերել, մի բան որ անհրաժեշտ է և ժողովրդի հետ գործ ունեցող պաշտօնեաներին: Այդ ճիշդ է, այն ժամանակ մեզ մնում է զարմանալ մեր «բարձրագոյն» դպրոցի՝ ձեմարանի՝ ղեկավարների և նրանց երեւելի «խմբի» գործունէութեան վրա: Ինչով ուրեմն կարող են պարծենալ՝ ահա՛ քառորդ դար է մեր դպրոցական հաստատութիւնները կապալով վերցրած այդ «պահպանողական գործիչները», մի՞թէ նրանով, որ իրենց հակառակորդների դէմ ամեն աններելի հնարքների, ամեն հալածանքի դիմող մեր կղերական այդ ցերեթները այսօր խոստովանեն, որ նոյն իսկ «ընդհանուր զարգացում» տալ իրենց սաներին չը կարողացան: Զարմանալի չէ, որ մեր «աստուածաբանները», ոչ միայն չը կարողացան ներշնչել բուն «քրիստոնեական աշ-

խարհայեցողութիւն», աւարուխտական զգացմունքներ՝ իրենց դաստիարակութեան յանձնված պատանիներին, այլ միացած մեր «երեւելի մանկավարժներին» և «գիտնական ուսուցիչներին» հետ չը կարողացան ընդարձակել իրենց սաների մտաւոր հօրիզօնը, տալ նրանց ընդհանուր զարգացում և պատրաստութիւն՝ ըմբռնելու համար շրջապատող հասարակական երեւոյթները և ժողովրդի պահանջները: Ամեն ինչ նպաստաւոր էր այդ կղերական ցերեթներին. հոգեւոր իշխանութիւնը նրանց տուել էր գործելու և՛ կատարեալ լիազօրութիւն, և մօնօպօլիա և աշխատանքի մեծաքանակ վարձատրութիւն. չէր մերժվում նրանց ոչ մի քմահաճութիւն, բայց ի՞նչ աջողեցրին դրանք: Ասպարէզից հեռացրին իրենց հակառակորդներին, ընկան ձեւամոլութեան և շահասիրութեան ետեւից և ներշնչելին իրենց սաներին իրենց սահմանափակ հայեացքները և ողորմելի նեղսրտութիւնն ու ընչաքաղցութիւնը: Ինչպէս որ իրանք էին արհամարհում ժողովուրդը, այնպէս են վարվում և նրանց պատրաստած «շնորհունակներն» ու «բարձրապատիւները»: Թէ արդարեւ այդպէս է վերաբերվում ժողովուրդին մեր վեղարաւոր նոր սերունդը (չնչին բացառութիւնները մի կողմ թողնենք) այդ ցոյց է տալիս ինքը կեանքը: Հեռու չը գնանք՝ օրինակներ բերելու համար: Մի՞թէ էջմիածնի գործերում այնքան «ձայն ունեցող» այդ մեր «գործիչներին», ինչպէս և նրանց աշակերտներին չը պէտք է յայտնի լինէին, օրինակի համար, այն փաստերը, որ «Մշակի» 149 և 172 №-ում, Ատրպատականից դրած թղթակցութիւններն են նկարագրում: Ահա՛ ձեզ մի թեմ, որը էջմիածնից է կախված և նրանից այնքան էլ հեռու չէ, մի թեմ, ուր ամբողջ դաւառների հայ ժողովուրդը տարիներով մնում է անքահայ, անյաջօրդ, առանց ուսումնարանների, քարոզիչների և հոգեւոր իշխանութեան հոգսերի. Բարանդուղի 14 զիւղ, Ուրմիայի 25 զիւղ, Սուլդուղի հայերը թրքախօս են, յուսահատութիւնից պատրաստ են մահմեդականութիւն ընդունել. ի՞նչ է անում դրա դէմ էջմիածինը, ո՞ր ձեմարանական

գնաց գործելու այդ վայրերում: Մամուլը իւրաքանչիւր անգամ տեղեկացնում է մէջ, որ վանեցին, բաղիշեցին, կիլիկիացին կրօնափոխ են լինում, որովհետեւ ամեն օր բռնաբարվում են նրանց իրաւունքները, պատրիարքարանը ականջ չի դնում նրանց անթիւ բողոքներին, լալով, հեկեկալով հովիւ, առաջնորդ են պահանջում, իրենց ցաւերի դարման են խնդրում, բայց լսող չը կայ. իսկ մեր սրբազանները և երիտասարդ «արմաշականները» չեն ուղղում թողնել Բօսֆօրի դեղեցիկ ամբերը և իրենց պաշտելի մարմինը պարարտացնող անդորրութիւնը:

Մամուլը որքան ուղղում է թող վրդովվել, բողոքի, պահանջի, քարոզի, եթէ Աւետարանը զօրութիւն ունի փոխելու դայլի սովորութիւնները, այն ժամանակ կարելի է յուսալ, որ և ժողովրդի հեկեկանքները կը շարժեն մեր «աստուածաբան» կարիքիստների զութը. դրանք այնպէս չեն դաստիարակված ու ներշնչված, որ եկեղեցի ասելով քարուկիրը և իրենց անձնական շահերը չը հասկանան, այլ՝ մի որոշ համայնք կազմող ժողովրդի պահանջները: Ուսուցիչների ոգին լաւ է արտացոլվել այդ աշակերտների «ուղղութեան» մէջ, որ չը նայած վերև յիշած քստմնելի քարասրտութեան և անհոգութեան, երբ որ խօսք է լինում օտար եկեղեցիների կրօնաւոր անձանց եռանդուն գործունէութեան մասին, այն ժամանակ մեր փափկասէր վեղարաւորները, իրանց աշխարհական պաշտպանների հետ միասին, հարկ են համարում արդարանալ, առարկելով, որ օտարները չար դիտաւորութեամբ, այսինքն՝ «հաւատօրութեան» նպատակով են դնում Թիւրքիա կամ Պարսկաստան և օգնում այնտեղի քրիստոնեաներին: Սակայն մոռանում են մեր այդ փափկատուն հայր-սուրբերը, որ այդ խօսքերով հէնց իրենց բերանով իրանք են իրանց դատապարտում. որովհետեւ՝ «այդ ինչու, պատուելի հայր-սուրբեր, կը հարցնենք դրանց, բարի դիտաւորութեամբ, ձեր եկեղեցու հօտը փրկելու նպատակով անգամ, դուք ևս անընդունակ էք եռանդ ու անձնութիւն ցոյց տալ. չե՞ որ բարի դադափարը աւելի պէտք է ոգեւորէր ձեզ, քան չարը՝ ուրիշներին»...

1898 թ., Նոյեմբեր:



ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

- 1) Այց թիւքաց չայաստանին, Թիֆլիս,
1890 թ. Գինը 60 կոպ.
- 2) Ժողովրդի կրթութեան գործը մեզանում,
Մոսկուա, 1892 թ. » 20 »

ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Կենտրոնական գրավաճառանոցին.

5132

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0039326

